

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

30 դեկտեմբերի 2022 թվականի № 134-Լ

30 դեկտեմբերի 2022 թվականի № 1407 -Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ
ԱՆՁԱՆՑ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՒՏՔԻ (ԵԼՔԻ), ԲԵՌՆԵՐԻ, ԱՅԼ
ԳՈՒՅՔԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ
ԿԵՏԵՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՏԵՎԵԼՈՒ ԵՎ
ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ, ԻՆԶՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի № 735-Ն որոշման 2-րդ հավելվածի 8-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերում անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, այլ գույքի, կենդանիների տեղափոխման, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու, ինչպես նաև ազգային անվտանգության և մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից գործողությունների իրականացման հերթականության տեխնոլոգիական սխեման և նկարագիրը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության պետական սահմանի օդային անցման կետերում անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, այլ գույքի, կենդանիների տեղափոխման, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի օդային անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու, ինչպես նաև ազգային անվտանգության և մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից գործողությունների իրականացման հերթականության տեխնոլոգիական սխեման և նկարագիրը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ**

Ա.ԱԲԱԶՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ռ.ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված № 1

Հայաստանի Հանրապետության ազգային
անվտանգության ծառայության տնօրենի
«30» դեկտեմբերի 2022թ. N 134 -Լ

և

Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
«30» դեկտեմբերի 2022թ. N 1407 -Լ
համատեղ հրամանի

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՎՏՈՍՈՔԻԼԱՅԻՆ
ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՒՏՔԻ
(ԵԼՔԻ), ԲԵՌՆԵՐԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՎՏՈՍՈՔԻԼԱՅԻՆ
ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ ՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ
ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՅ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՀՀ) պետական սահմանի (այսուհետ՝ նաև պետական սահման) ավտոմոբիլային անցման կետերով (այսուհետ՝ նաև ՊՍԱԿ կամ անցման կետ) անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, այլ գույքի, կենդանիների տեղափոխման, պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու, ինչպես նաև ազգային անվտանգության և մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից գործողությունների իրականացման հերթականության տեխնոլոգիական սխեման և նկարագիրը (այսուհետ՝ սխեմա) մշակվել է ՀՀ միջազգային պայմանագրերի, «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի, «Պետական սահմանի մասին», «Սահմանապահ զորքերի մասին», «Մաքսային կարգավորման մասին» օրենքների, ՀՀ կառավարության 2011 թվականի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» N 702-Ն, «Հայաստանի Հանրապետության պետական սահմանում սահմանային ռեժիմը և

պետական սահմանի անցման կետերի ռեժիմը սահմանելու մասին» N 735-Ն որոշումների, ինչպես նաև ՀՀ տարածքում սահմանային և մաքսային ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան և սահմանում է ՀՀ պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերում անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի (այսուհետ՝ անձանց և ապրանքների) նկատմամբ սահմանահատման գործընթացում վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հիմնական գործառույթների հաջորդականությունը, դրանց ժամանման և մեկնման ժամանակ իրականացվող պետական հսկողության կառուցվածքը և պաշտոնատար անձանց կողմից իրականացվող քայլերի և գործողությունների հերթականությունը:

2. ՀՀ պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերում պետական սահմանը հատող անձինք և ապրանքները ենթակա են սահմանային վերահսկողության և մաքսային հսկողության, ինչպես նաև օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության:

3. Վերահսկողությունն ու հսկողությունը իրականացվում են մշտապես՝ հատուկ սարքավորված վայրերում, ծառայողական շինություններում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև անմիջապես տրանսպորտային միջոցում, որի նպատակն է սահմանահատումը կանոնակարգող օրենսդրության նորմերի պահպանումը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով համապատասխան հսկողության և վերահսկողության անընդհատության և հուսալիության ապահովումը անձանց և ապրանքների սահմանային հսկողության տակ գտնվելու՝ անցման կետի տարածքում և այնտեղ ներկայացված պաշտոնատար անձանց լիազորությունների և գործառույթությունների (գործառույթների) իրականացման ողջ ժամանակահատվածում:

4. Անցման կետերի տարածքում, որտեղ իրականացվում են հսկողություն և վերահսկողություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են մտցվել լրացուցիչ ռեժիմային սահմանափակումներ:

5. Անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը պետական սահմանի անցման կետերի տարածք իրականացվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ) սահմանապահ զորքերի (այսուհետ՝ նաև ՍԶ) համապատասխան պաշտոնատար անձանց թույլտվությամբ:

6. Սպասարկող անձնակազմի և այլ անձանց մուտքը պետական սահմանի անցման կետեր և ռեժիմային գոտիներ թույլատրվում է ՍԶ կողմից ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի N 735-Ն որոշման 2-րդ հավելվածով նախատեսված փաստաթղթերի առկայության դեպքում:

7. Պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերի ռեժիմը պահպանվում և հսկվում է ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների կողմից:

8. Անձանց և ապրանքների վերահսկողության և հսկողության կազմակերպման ու իրականացման կարգերը, այդ նպատակով օգտագործվող միջոցներն ու մեթոդները սահմանվում են ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ:

9. Պետական սահմանում ՀՀ շահերին սպառնալիք ծագելու դեպքում ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարը կարող է ժամանակավորապես դադարեցնել հաղորդակցությունը պետական սահմանի անցման կետերում:

10. Սույն սխեման գործում է ավտոմոբիլային բոլոր անցման կետերում և, հաշվի առնելով յուրաքանչյուր անցման կետի առանձնահատկությունները, թողունակությունը, ենթակառուցվածքների առկայությունն ու տեղաբաշխվածությունը, տեղային այլ պայմանները, ՀՀ ԱԱԾ ՍԶ և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) մաքսային մարմինների համաձայնությամբ կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների:

2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Սույն սխեմայում կիրառվող հասկացություններն են.

1) **Ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքներ՝** օրենսդրությամբ ակնհայտ առևտրային քանակության նախատեսված արժեքային կամ բնաիրային չափը գերազանցող ապրանքներ.

2) **Անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ՝** միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող փաստաթուղթ, որը տրված է ՀՀ կամ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը.

3) **Ապրանքներ՝** ՀՀ պետական սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ ուղևորներ և ապրանքներ տեղափոխող փոխադրամիջոցները.

4) **Բեռնային հոսքուղի՝** ՊՄԱԿ-ի ներմուծման և արտահանման ուղղությամբ տանիքածածկ տարածքներում (շվաքարաններ) միայն բեռնատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված ուղիներ.

5) **Գոտիներ՝** ՊՄԱԿ-ի տարածքի պայմանական բաժանում, որով արտացոլվում են անցման կետի տարբեր գործառնական հատվածները, այդ թվում՝

Գոտի 1.1՝ ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղությամբ ՊՄԱԿ-ի՝ ՀՀ պետական սահմանի կողմից տեղակայված մուտքի տաղավարից մինչև անցման կետի շենքի ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղության վրա տեղակայված ծածկված տարածքը.

Գոտի 1.2՝ ՊՄԱԿ-ի վարչական շենքի ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղության վրա տեղակայված ծածկված տարածքը (այսուհետ՝ շվաքարան 1), այդ թվում՝ թե

ուղևորատար և թե բեռնատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված ուղիներում.

Գոտի 1.3՝ բեռնատար տրանսպորտային միջոցների ՊՄԱԿ-ի ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղության վրա տեղակայված կայանատեղին,

Գոտի 1.4՝ ՊՄԱԿ-ի մանրակրկիտ հսկողության անգարը հարակից տարածքով,

Գոտի 1.5՝ ՊՄԱԿ-ի վարչական շենքի ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղության վրա տեղակայված շվաքարան 1-ից մինչև անցման կետից դեպի Հայաստանի Հանրապետություն մուտքի տաղավար ընկած տարածքը.

Գոտի 2.1՝ Հայաստանի Հանրապետության կողմից մուտքի տաղավարից մինչև ՊՄԱԿ-ի վարչական շենքի արտահանման (ՀՀ-ից ելքի) ուղղության վրա տեղակայված հսկողության տարածքը.

Գոտի 2.2՝ ՊՄԱԿ-ի վարչական շենքի արտահանման (ՀՀ-ից ելքի) ուղղության վրա տեղակայված ծածկված տարածքը (այսուհետև շվաքարան 2), այդ թվում՝ թե ուղևորատար և թե բեռնատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված ուղիներում.

Գոտի 2.3՝ ՊՄԱԿ-ի վարչական շենքի արտահանման (ՀՀ-ից ելքի) ուղղության վրա տեղակայված շվաքարան 2-ից մինչև ՊՄԱԿ-ից դեպի ՀՀ պետական սահմանի կողմից տեղակայված անցման կետի մուտքի տաղավար ընկած հատվածը.

Գոտի 3՝ ՊՄԱԿ-ի վարչական շենքի ներսում ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղության ներքին տարածքը.

Գոտի 4՝ ՊՄԱԿ-ի վարչական շենքի ներսում արտահանման (ՀՀ-ից ելքի) ուղղության ներքին տարածքը.

Գոտի 5՝ կշեռքները.

Գոտի 6՝ բեռնատար տրանսպորտային միջոցների ռենտգեն ստուգման շինությունը.

6) **Երկքաղաքացի՝** այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն: ՀՀ երկքաղաքացի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն.

7) **Կացության կարգավիճակ՝** ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կամ ՀՀ վարչապետի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու ՀՀ տարածքում այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում.

8) **Խմբի (հերթափոխի, բաժանմունքի) պետ՝** ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ, որը ղեկավարում է հերթափոխի (սահմանապահ վերակարգերի) ծառայությունը և հանդիսանում է հերթափոխի ողջ անձնակազմի պետը.

9) **Մաքսային հսկողություն**՝ ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված դրույթների պահպանման ստուգման և ապահովման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ.

10) **Մաքսային տարանցում**՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄՕ) սահմանված մաքսային ընթացակարգ.

11) **Սահմանահատման [ԲԲ] համակարգ**՝ մաքսային մարմինների կողմից կիրառվող տեղեկատվական Էլեկտրոնային համակարգ, որով հաշվառվում են Հայաստանի Հանրապետության ՊՄԱԿ-ով տրանսպորտային միջոցներով (բացառությամբ՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ուղեկցվող ուղեբեռ տեղափոխող մարդատար անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների) ներմուծվող ապրանքների և այդ տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության, սննդամթերքի և կերի անվտանգության, բուսասանիտարական, անասնաբուժական վերահսկողության նպատակով իրականացվող քայլերը.

12) **Սահմանային վերահսկողություն**՝ միջոցառումների համակարգ, որն ապահովում է պետական սահմանի հատման օրինականությունը.

13) **Սահմանապահ վերակարգ**՝ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների մեկ գինձառայող կամ գինձառայողների խումբ, որը պետական սահմանի անցման կետում կամ դրա տարածքից դուրս կատարում է ՀՀ պետական սահմանի պահպանության գործառույթ.

14) **Վավեր փաստաթուղթ**՝ փաստաթուղթ, որը համապատասխանում է սահմանված նմուշին, պատկանում է այն ներկայացնողին, տրված է իրավասու մարմնի կողմից, պատշաճ կերպով լրացված է (ձևավորված է), վավերական է, չի պարունակում կեղծիքներ.

15) **Մուտքի վիզա կամ արտոնագիր**՝ ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործել ՀՀ, տարանցիկ երթևեկել ՀՀ տարածքով, գտնվել ՀՀ-ում և դուրս գալ ՀՀ-ից՝ դրանում նշված նպատակներով, պայմաններով և ժամկետներում.

16) **Տրանսպորտային միջոցներ**՝ բոլոր տեսակի փոխադրամիջոցները, որոնք օգտագործվում են ՀՀ պետական սահմանով ուղևորների և ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով, այդ թվում՝ բեռնարկղերը (կոնտեյներները) և այլ օժանդակ փոխադրամիջոցները.

17) **Ուղեբեռ**՝ պետական սահմանը հատող անձանց անձնական և ձեռքի իրերը.

18) **Ուղևորային հոսքուղի**՝ ՊՄԱԿ-ի ներմուծման և արտահանման ուղղությամբ տանիքածածկ տարածքներում (շվաքարաններ) միայն մարդատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված ուղիներ.

19) **Օտարերկրացի՝** ՀՀ քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք):

12. Այլ իրավական ակտերով սահմանված հասկացությունները սույն սխեմայում կիրառվում են տվյալ իրավական ակտերում սահմանված իմաստներով:

3. **ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍՈՒՏՔԻ (ԵԼՔԻ),
ԳՏՆՎԵԼՈՒ, ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

13. ՀՀ ԱԱԾ ՍԶ և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինները ՊՍԱԿ-ում գործում են փոխհամաձայնեցված, սերտ համագործակցության, փոխօգնության, փոխլրացման միջոցով, ՊՍԱԿ-ի առանձին հատվածներում նաև համատեղ: ՊՍԱԿ-ում իրականացվող գործառնությունների (գործառույթների) իրականացման շրջանակներում ՀՀ ԱԱԾ ՍԶ և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների միջև առաջացած՝ օրենսդրությամբ չկարգավորված բոլոր խնդիրները լուծվում են համատեղ քննարկումների շրջանակներում՝ փոխհամաձայնության միջոցով:

14. Պետական այլ մարմինների՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմիններին վերապահված լիազորություններն իրացվում են ըստ անհրաժեշտության տվյալ մարմինների կողմից կազմված և հաստատված մեթոդական ուղեցույցների հիման վրա, տվյալ մարմինների կողմից դրանց իրականացման ընտրանքային վերահսկողության պայմաններում:

15. ՊՍԱԿ-ի արտահանման (ՀՀ-ից ելքի) և ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղությունները պայմանականորեն բաժանվում են ուղևորային և բեռնային հոսքուղիների:

16. Գոտի 1.1-ում և Գոտի 2.3-ում բեռնային գործողությունների իրականացումն արգելվում է:

17. Տրանսպորտային միջոցների մուտքը (ելքը) անցման կետի տարածք թույլատրվում է սահմանապահ վերակարգի կողմից, հերթով՝ ըստ անցման կետ ժամանման հերթականության:

18. ՀՀ-ից մեկնող և ՀՀ ժամանող տրանսպորտային միջոցներ ուղևորների նստելն ու դրանցից իջեցնելը, ինչպես նաև բեռնումն ու բեռնաթափումն իրականացվում են ՀՀ ԱԱԾ սահմանապահ գորքերի և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների թույլտվությամբ, ՊՍԱԿ-ի նախապես համաձայնեցված վայրերում:

19. Ավտոմոբիլային անցման կետով արտահերթ բաց են թողնվում՝

- 1) ՀՀ կառավարական և խորհրդարանական պատվիրակությունները,
- 2) դիվանագիտական անձնագրերով անձինք,

3) անձինք, որոնք մեկնում կամ ժամանում են ազգականների ծանր հիվանդության կամ մահվան մասին առկա բժշկի կամ ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու պաշտոնատար անձի կողմից հաստատված կամ դիվանագիտական ուղիներով ստացված ծանուցագրերով,

4) մարդասիրական օգնություն փոխադրող տրանսպորտային միջոցներն ու դրանց ուղեկցող անձինք՝ օրենքով սահմանված կարգով,

5) մարզական հավաքական թիմերը, որոնք մեկնում կամ ժամանում են միջազգային մրցումների,

6) մինչև 3 տարեկան երեխա ուղեկցող անձինք,

7) երեխաների կազմակերպված խմբերը, որոնք մեկնում են առողջարանական բուժման,

8) կանոնավոր միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները,

9) վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրող տրանսպորտային միջոցները,

10) արագ փչացող բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցները՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում,

11) մեծ եզրաչափերով և ծանրաքաշ բեռնատար տրանսպորտային միջոցները,

12) անցման կետում վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձինք, սպասարկող անձնակազմը և տնտեսական գործունեություն իրականացնող անձինք,

13) անհապաղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու նպատակով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատողները և նրանց փոխադրող տրանսպորտային միջոցները,

14) ՀՀ ոստիկանության և մաքսային մարմինների պաշտոնատար անձինք, որոնք իրականացնում են տրանսպորտային միջոցների պահպանություն և ուղեկցում, նրանց փոխադրող տրանսպորտային միջոցները՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում,

15) արտակարգ իրավիճակներ առաջանալիս անհապաղ օգնություն ցուցաբերելու նպատակով շտապ օգնության, հրշեջ, փրկարարական ծառայությունների հատուկ տրանսպորտային միջոցները և նրանց անձնակազմը, վարակիչ հիվանդությունների օջախների համաճարակաբանական հետազոտության նպատակով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատողները, անցման կետերի վերակառուցման և այլ շինարարական աշխատանքներ իրականացնող անձինք և հատուկ տեխնիկան՝ անցման տվյալ կետի սահմանապահ գորքերի ստորաբաժանման պետի ցուցումով:

20. Սույն սխեմայում չսահմանված դեպքերում ՊՄԱԿ-ի տարածքով ուղևորների տեղաշարժի, բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կայանման տեղն ու տևողությունը որոշվում են ՀՀ ԱՄԾ սահմանապահ գորքերի և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից՝ փոխհամաձայնությամբ:

21. Անձանց և ապրանքների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները կարող են ՀՀ-ից մեկնել և ՀՀ մուտք գործել, ինչպես նաև անցման կետում փոխել կայանման տեղը միայն ՀՀ ԱՄԾ սահմանապահ գորքերի և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների թույլտվությամբ:

22. Պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետ (ռեժիմային գոտիներ) մուտքը (ելքը) սահմանապահ գորքերը թույլատրում են՝

1) սահմանահատման նպատակով՝ ֆիզիկական անձանց՝ միջազգայնորեն ճանաչված անձնագրի կամ համապատասխան ճամփորդական փաստաթղթի կամ ՀՀ մուտք գործելիս՝ ՀՀ վերադարձի վկայականի կամ ապաստանի հայցի, կամ ՀՀ-ից ելք գործելիս՝ տվյալ պետության վերադարձի վկայականի, իսկ տրանսպորտային միջոցներին՝ գրանցման վկայագրի կամ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթղթերի հիման վրա,

2) ՀՀ ԱՄԾ սահմանապահ գորքերի գինձառայողներին՝ ծառայողական վկայականների հիման վրա,

3) ՀՀ ԱՄԾ (բացառությամբ ՍԶ-ի), ՀՀ ոստիկանության, մաքսային մարմինների և պետական այլ մարմինների պաշտոնատար անձանց՝ ծառայողական վկայականների և իրավասու պաշտոնատար անձի կողմից տրված գործուղման թերթիկների հիման վրա, իսկ անհապաղ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու նպատակով համապատասխան մարմինների աշխատողներին՝ ծառայողական վկայականների և անցման տվյալ կետի սահմանապահ գորքերի ստորաբաժանման պետի կողմից տրված 6x8 սմ չափեր ունեցող, հայերենով, ռուսերենով և անգլերենով լրացված ժամանակավոր անցագրերի հիման վրա,

4) կազմակերպությունների այն աշխատողները, որոնք իրականացնում են տեղական և միջազգային փոխադրումներ կամ ապահովում են երկաթուղային, ավտոմոբիլային ճանապարհների, ջրային ուղիների, համապատասխան տրանսպորտային միջոցների, ինչպես նաև նավթամուղերի, գազամուղերի, կապի և էլեկտրահաղորդման գծերի ու էլեկտրահաղորդիչների վերանորոգում կամ շահագործում կամ իրականացնում են շրջակա միջավայրի՝ կենդանական և բուսական աշխարհի (այդ թվում՝ անտառների ու բնության հատուկ պահպանվող տարածքների), ջրային ռեսուրսների, մթնոլորտի, հողերի, քնդերքի ուսումնասիրություններ, մոնիթորինգ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նշվածների օգտագործում, շահագործում կամ բնապահպանական տեսչական աշխատանքներ՝ ծառայողական վկայականներով և իրավասու պաշտոնատար անձի կողմից տրված գործուղման թերթիկներով,

5) անցման կետերում անձանց և տրանսպորտային միջոցների վերահսկողություն և հսկողություն իրականացնող ծառայությունների (այդ թվում՝ պետական սահմանի անցման կետերում այլ պետական մարմինների ժամանակավորապես տեղակայման դեպքում տվյալ պետական մարմինների), ինչպես նաև անցման կետերում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատողներին սահմանապահ ջոկատի պետի կամ սահմանապահ գորքերի հրամանատարի կողմից տրվում է 6x8 սմ չափեր ունեցող, հայերենով, ռուսերենով և անգլերենով լրացված մշտական անցագիր՝ ծառայության կամ կազմակերպության ղեկավարի դիմումի հիման վրա, որին կցվում է մուտք գործող անձանց ցուցակը,

6) արտակարգ իրավիճակների (երկրաշարժ, ջրհեղեղ, սողանք, հրդեհ և այլն) հետևանքները վերացնող փրկարարական ստորաբաժանումներում ընդգրկված անձինք, հրշեջները, ինչպես նաև անհապաղ անհրաժեշտությամբ մուտք գործող անձինք (շտապ բժշկական օգնության դեպքերում կամ վարակիչ հիվանդությունների օջախների համաճարակաբանական հետազոտության նպատակով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատողների, կենդանիների վարակիչ կամ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների օջախներում պայքարի կազմակերպման և իրականացման նպատակով անասնաբուժական մասնագետների մուտք գործելու դեպքում և այլն)՝ ծառայողական փաստաթղթի հիման վրա, իսկ մերձավոր ազգականի ծանր հիվանդությունը կամ մահը հավաստող փաստաթղթերի (կամ դրանց պատճենների) առկայության դեպքերում՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

23. ՊՄԱԿ-ի տարածքում՝ հոսքուղիներում գտնվող տրանսպորտային միջոցների, ինչպես նաև առանց իջեցման անձանց նկատմամբ սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժասանիտարական, բուսասանիտարական վերահսկողությունների և մաքսային հսկողության վրա ծախսվող ժամանակը չպետք է գերազանցի՝

1) ավտոբուսների համար՝

ա. միկրոավտոբուսների համար՝ 30 րոպե,

բ. մինչև 30 տեղանոց ավտոբուսների համար՝ 40 րոպե,

գ. մինչև 40 տեղանոց ավտոբուսների համար՝ 50 րոպե,

դ. 40 և ավելի տեղանոց ավտոբուսների համար՝ 60 րոպե,

2) բեռնատար ավտոմոբիլների համար՝

ա. արագ փչացող բեռներ փոխադրող բեռնատար ավտոմոբիլների համար՝ 20 րոպե,

բ. վտանգավոր բեռներ և չվնասագերծված տարաներ փոխադրող բեռնատար ավտոմոբիլների համար՝ 30 րոպե,

գ. այլ բեռնատար ավտոմոբիլների համար՝ 40 րոպե,

3) թերևս մարդատար ավտոմոբիլների համար՝ 15 րոպե:

24. Անհրաժեշտության դեպքում, ավտոմոբիլային անցման կետում՝ անձանց և ապրանքների լրացուցիչ վերահսկողություն և հսկողություն իրականացնելու նպատակով, թույլատրվում է ժամանակի գերազանցում, բայց ոչ ավելի, քան 5 ժամ: Այս դեպքում տրանսպորտային միջոցը հանվում է հոսքուղուց և կայանվում այդ նպատակով հատուկ առանձնացված վայրում:

25. Անձանց և տրանսպորտային միջոցների փաստաթղթերի ստուգումն իրականացվում է փաստաթղթերի ստուգման խցիկներում, որոնք հագեցված են համակարգչային և հատուկ տեխնիկայով: Առանձին դեպքերում, ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների պաշտոնատար անձանց որոշմամբ, առանձին կատեգորիայի անձանց փաստաթղթերը կարող են ստուգվել անմիջապես տրանսպորտային միջոցում:

26. Հոսքուղիներում գտնվող մեկ տրանսպորտային միջոցի և վարորդի փաստաթղթերի ստուգման և ձևակերպման վրա ծախսվող ժամանակը կազմում է մինչև 5 րոպե, իսկ ուղևորների սպասարկման սրահում 1 ուղևորի փաստաթղթերի ստուգման և ձևակերպման վրա ծախսվող ժամանակը կազմում է մինչև 3 րոպե:

27. ՀՀ պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերում մաքսային հսկողություն և սահմանային վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումները ձեռնարկում են համապատասխան միջոցներ տրանսպորտային միջոցների շարժն արագ կազմակերպելու և անցման կետերում չհիմնավորված կուտակումները բացառելու համար:

4. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՑԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

28. Ավտոմոբիլային ՊՄԱԿ-ում ներկայացված ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումներն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում՝

1) պետական սահմանի հատման օրինականությունն ապահովելու նպատակով ստուգում են անձանց և տրանսպորտային միջոցների պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերը,

2) պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերում կատարում են համապատասխան նշումներ,

3) օտարերկրացիներին տրամադրում են ՀՀ մուտքի վիզա, մերժում են մուտքի վիզայի տրամադրումը կամ տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած են ճանաչում,

4) ՀՀ քաղաքացիների անձնագրում կատարում են օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում,

5) իրականացնում են Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով իրավախախտում կատարած տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողություն,

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով իրենց իրավասությանը վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը և նշանակում վարչական տույժեր,

7) իրականացնում են պետական սահմանի ռեժիմը, սահմանային ռեժիմն ու պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչական ձերբակալում՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետով,

8) իրականացնում են պետական սահմանը հատող անձանց տվյալների հաշվառում և տեղեկատվական համակարգ մուտքագրում,

9) իրականացնում են պետական սահմանի անցման կետի ռեժիմի պահպանում և հսկողություն,

10) իրականացնում են տրանսպորտային միջոցների դիտագնում:

29. Պետական սահմանով անձանց ՀՀ մուտք գործելիս ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների զինծառայողները ստուգում են՝

1) ՀՀ քաղաքացիների դեպքում՝

ա. ՀՀ քաղաքացու անձնագիրը կամ

բ. ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիրը կամ

գ. ՀՀ դիվանագիտական անձնագիրը կամ

դ. ՀՀ վերադարձի վկայականը կամ

ե. ճամփորդական այլ վավեր փաստաթուղթը՝ ՀՀ երկքաղաքացիների դեպքում,

2) օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝

ա. սովորական անձնագիրը և ՀՀ այցելության մուտքի վիզայի կամ Էլեկտրոնային վիզայի կամ ՀՀ կացության կարգավիճակի առկայությունը, եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ կամ

բ. ծառայողական (պաշտոնական) անձնագիրը և ՀՀ պաշտոնական մուտքի վիզայի կամ ՀՀ կացության կարգավիճակի կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության նամակի առկայությունը, եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ կամ

գ. դիվանագիտական անձնագիրը և ՀՀ դիվանագիտական մուտքի վիզայի կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության նամակի առկայությունը, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ,

3) քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝

ա. ճամփորդական փաստաթուղթը և ՀՀ մուտքի վիզայի կամ Էլեկտրոնային վիզայի կամ ՀՀ կացության կարգավիճակի առկայությունը, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ,

4) ՀՀ-ում չհաշվառված տրանսպորտային միջոցներով օտարերկրացու նկատմամբ կայացված վարչական ակտերի առկայությունը: Առկայության դեպքում օտարերկրացուն հանձնվում է վարչական ակտը (ինչպես նաև վարչական ակտի կատարման կարգի և չկատարման իրավական հետևանքների մասին հուշաթերթիկը), իսկ վարչական ակտով դրված պարտավորություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում օտարերկրացուն ՀՀ մուտքի վիզայի տրամադրումը մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում, կամ մուտքը ՀՀ արգելվում է՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրվանից մեկ տարի ժամկետով,

5) տրանսպորտային միջոցների փաստաթղթերը:

30. ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների գինձառայողները օտարերկրացիներին անցման կետերում տրամադրում են մուտքի վիզա: Օտարերկրացի վարորդին մուտքի վիզայի տրամադրման անհրաժեշտության դեպքում տրանսպորտային միջոցը հանվում է հոսքուղուց՝ մինչև համապատասխան փաստաթղթերի ձևակերպումը:

31. Օտարերկրացիների մոտ երկու անձնագրի (ճամփորդական փաստաթղթերի) առկայության դեպքում ձևակերպումն իրականացվում է այն անձնագրով (ճամփորդական փաստաթղթով), որին տրված է ՀՀ մուտքի վիզան, իսկ ՀՀ-ի հետ առանց մուտքի վիզայի ռեժիմով պետությունների քաղաքացիների դեպքում՝ քաղաքացու ցանկությամբ:

32. Եթե փաստաթղթերի ընդհանուր ստուգման ժամանակ հայտնաբերվել են հատկանիշներ, որոնք կարող են վկայել փաստաթղթի կեղծված, անվավեր լինելու մասին կամ կորած և անվավեր փաստաթղթերի հաշվառումներով անցնող փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում անցկացվում է փաստաթղթի հատուկ ստուգում, որի տևողությունը չպետք է գերազանցի 3 ժամը:

33. Առանց անձնագրի, դրան փոխարինող փաստաթղթի կամ անվավեր անձնագրով ՀՀ ժամանած կամ ՀՀ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ մուտքն արգելված ՀՀ ԱԳԾ ՍԶ կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացու մուտքը չի թույլատրվում ՀՀ տարածք, և հնարավորության դեպքում օտարերկրացին անմիջապես վերադարձվում է այն պետություն, որտեղից ժամանել է, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ՀՀ է ժամանել ՀՀ-ում ապաստանի իրավունք (փախստականի կարգավիճակ, ապաստան կամ քաղաքական ապաստան) հայցելու նպատակով: Անմիջապես հետ վերադարձման անհնարինության դեպքում այդպիսի

օտարերկրացիները կարող են պահվել անցման կետի տարանցիկ գոտում կամ անցման կետում տեղակայված հատուկ կացարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Օտարերկրացու վերադարձման դեպքում ՀՀ ԱԳՇ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման կողմից կազմվում է վերադարձման ակտ՝ այն պետության իրավասու մարմիններին փոխանցելու նպատակով, որտեղից նա ժամանել է:

35. ՀՀ-ից մեկնելիս ՀՀ ԱԳՇ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների գինժառայողները ստուգում են՝

1) ՀՀ քաղաքացիների դեպքում՝

ա. ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիրը կամ

բ. ՀՀ դիվանագիտական անձնագիրը կամ

գ. ՀՀ քաղաքացու անձնագիրը և օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականությունը (այն հաստատող կնիքի բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիներին արգելվում է մեկնել ՀՀ-ից) կամ

դ. ճամփորդական այլ վավեր փաստաթուղթը՝ ՀՀ երկքաղաքացիների դեպքում,

2) օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝

ա. ճամփորդական փաստաթուղթը (սովորական, ծառայողական, պաշտոնական, դիվանագիտական անձնագիր, վերադարձի վկայական և այլն) և մինչև դուրս գալու պահը ՀՀ տարածքում նրա օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայությունը, եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Օտարերկրացիների մոտ երկու անձնագրի (ճամփորդական այլ փաստաթղթերի) առկայության դեպքում ձևակերպումն իրականացվում է օտարերկրացու նախընտրած անձնագրով (ճամփորդական փաստաթղթով),

3) քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝

ա. ճամփորդական փաստաթուղթը և մինչև դուրս գալու պահը ՀՀ տարածքում նրա օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայությունը (ՀՀ մուտքի վիզա կամ էլեկտրոնային վիզա կամ ՀՀ կացության կարգավիճակ), եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ,

4) ՀՀ-ում չհաշվառված տրանսպորտային միջոցներով օտարերկրացու նկատմամբ կայացված վարչական ակտերի առկայությունը: Առկայության դեպքում օտարերկրացուն հանձնվում է վարչական ակտը (ինչպես նաև վարչական ակտի կատարման կարգի և չկատարման իրավական հետևանքների մասին հուշաթերթիկը) (այդ ընթացքում տրանսպորտային միջոցը հանվում է հոսքուղուց՝ մինչև իրականացվող գործողությունների ավարտը): Վարչական ակտով դրված պարտավորություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում օտարերկրացու մուտքը ՀՀ արգելվում է:

36. Օտարերկրացիների կողմից ՀՀ-ում առանց վավերական վիզայի (արտոնագրի) կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկության կարգի խախտման դեպքեր հայտնաբերելիս, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ ԱՄԾ ՍԶ իրավասու պաշտոնատար անձինք քննում են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր և նշանակում վարչական տույժեր (այդ ընթացքում, եթե օտարերկրացին հանդիսանում է վարորդ, տրանսպորտային միջոցը հանվում է հոսքուղուց՝ մինչև իրականացվող գործողությունների ավարտը): Վարչական ակտով դրված պարտավորություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում օտարերկրացու մուտքը ՀՀ արգելվում է:

37. Եթե փաստաթղթերի ստուգման ժամանակ անձը չի ներկայացրել պետական սահմանը հատելու անհրաժեշտ փաստաթղթեր կամ վերջինիս ելքը ՀՀ-ից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արգելված է, ապա վերջինիս սահմանահատումը մերժվում է, այդ մասին սահմանապահները տեղեկացնում են ՀՀ ՊԵԿ մաքսային մարմիններին:

38. Ավտոմոբիլային ՊՍԱԿ-ում ներկայացված ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք, որոնց վերապահված են ավտոմոբիլային անցման կետի տարածքում հսկողական գործառնություններ իրականացնելու լիազորություններ, իրականացնում են.

1) Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) միասնական մաքսային տարածք ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանման և մեկնման հաշվառման գործառնություններ.

2) Ժամանող կամ մեկնող տրանսպորտային միջոցների և ապրանքների համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայության ստուգման և դրանցում մաքսային օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների առկայության ստուգման գործառնություններ.

3) Տարանցիկ մաքսային հայտարարագրերի ընդունման, գրանցման, բացթողնման և ավարտի մաքսային գործառնություններ, նշանակման վայր հասցնելու ժամկետների և փաստի նկատմամբ հսկողության իրականացման գործառնություններ.

4) Մաքսային օրենսդրության ակտերի՝ ներմուծման և արտահանման արգելքներ և սահմանափակումներ նախատեսող պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման (այսուհետև՝ արգելքներ և սահմանափակումներ) գործառնություններ.

5) Ռիսկերի նվազեցման միջոցառումների ցուցումների և տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման գործառնություններ.

6) Կիրառվող մաքսային ընթացակարգի պայմանների պահպանման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման գործառնություններ.

7) Ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանակավոր պահպանության հանձնման և դրանց պահպանության նկատմամբ հսկողության իրականացման գործառնություններ.

8) ՀՀ այլ մաքսային մարմիններում արտահանում նախատեսող ընթացակարգերով հայտարարագրված և ՀՀ տարածքից դուրս բերվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ փաստացի դուրսբերման փաստով պայմանավորված հսկողության իրականացման և էլքի հաստատման իրականացման գործառնություններ.

9) Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ ՊՍԱԿ-ում իրականացման ենթակա հսկողական միջոցառումների իրականացման, հաշվարկման և գանձման ենթակա հարկերի, տուրքերի և այլ վճարների հաշվարկման և գանձման գործընթացի իրականացման գործառնություններ.

10) Ֆիզիկական անձանց կողմից ԵԱՏՄ մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքները տեղափոխելու, ԵԱՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու եւ դրանք օգտագործելու կարգի ու պայմանների պահպանմանն ուղղված, ժամանակավոր պահպանման, մաքսային հայտարարագրման և անձնական օգտագործման ապրանքների բացթողման հետ կապված, սահմանով փոխադրվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողության իրականացման գործառնություններ.

11) Հայտնաբերված խախտումների և մաքսանենգության դեպքերի արձանագրման, իրենց իրավասությունների շրջանակներում վարչական վարույթների ընթացքի ապահովման իրականացման գործառնություններ.

12) Իրականացված գործողությունների կատարման փաստը հաստատելուն ուղղված գործառնություններ՝ մաքսային մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համապատասխան համակարգերում կամ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ թղթային եղանակով ներկայացված փաստաթղթերի վրա գրառումների, կնիքների, դրոշմակնիքների դրոշմման եղանակով գործողությունների հաստատման գործառնություններ.

13) Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական հսկման ենթակա ապրանքների վերահսկողության իրականացման գործառնություններ:

5. ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԱՆՁԱՆՑ
ՍՈՒՏՔԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ)
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

39. Բեռնատար տրանսպորտային միջոցներով, երրորդ երկրներից անձանց և ապրանքների դեպի ՀՀ բացթողնման գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պետական մարմինների կողմից վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հետևյալ հաջորդականությունը.

1) սահմանային վերահսկողություն,

2) մաքսային հսկողություն,

3) առանձին դեպքերում սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն:

40. Փոխադրողը (վարորդը) բեռնատար տրանսպորտային միջոցը մոտեցնում է ՊՄԱԿ-ի ներմուծման ուղղությամբ ՀՀ պետական սահմանի կողմից տեղակայված մուտքի հսկման տաղավարին (**ուղեփակոց №1**), որտեղից մուտք գործելով ՊՄԱԿ-ի տարածք (**գոտի 1.1**) անցնում է ռադիոակտիվ հսկողության շրջանակով (առկայության դեպքում) և ռադիոակտիվ ֆոնի ահագանգի բացակայության դեպքում՝ սահմանապահ վերակարգի կողմից ուղղորդվում է դեպի բեռնատար տրանսպորտային միջոցների հոսքուղում (**շվաքարան 1 (գոտի 1.2)**) տեղակայված փաստաթղթերի ստուգման խցիկ և սահմանապահ հսկիչին է ներկայացնում իր և տրանսպորտային միջոցի պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերը:

41. Սույն սխեմայի 29-32-րդ կետերով նշված գործողություններն իրականացնելուց հետո սահմանապահը ձևակերպում է փաստաթղթերը և տվյալները մուտքագրում է ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (այսուհետ՝ ՄԷԿՏ) համակարգ, պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում կատարում է համապատասխան նշում (ամսաթիվ-կնիքի դրոշմում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ) և թույլատրում է փոխադրողին (վարորդին) իր տրանսպորտային միջոցով անցնել մաքսային հսկողության գոտի, իսկ օտարերկրացու մուտքը ՀՀ չթույլատրելու դեպքում կատարվում են սույն սխեմայի 33-34-րդ կետերով նախատեսված գործողությունները:

42. Բեռնատար տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ սահմանային վերահսկողության գործառնությունների ավարտից հետո կամ դրան գուգահեռ **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** հսկողություն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից բեռնատար տրանսպորտային միջոցը և ժամանած բեռները ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվում են (ժամանման մասին ծանուցում, ըստ անհրաժեշտության համապատասխան նշագրումներ են արվում ուղեկցող փաստաթղթերի վրա կամ հաշվառվում են մաքսային մարմինների սահմանահատման տեղեկատվական համակարգում) և իրականացվում են նախ բեռի և բեռնային մասի, ապա վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնություններ և ավտոմեքենայի կշռում, համապատասխան տեղեկատվությունը մուտքագրվում է համակարգ: Նշված փուլում մաքսային մարմինների կողմից

տրանսպորտային միջոցում բեռի և բեռնային մասի, ապա վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնությունների իրականացմանը զուգահեռ սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների դիտագննում՝ պետական սահմանն ապօրինի հատելու փորձ կատարող անձ հայտնաբերելու նպատակով:

43. Ժամանման մասին ծանուցման հաշվառման շրջանակներում մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ստուգվում են բեռը ուղեկցող՝ ԵԱՏՄ ՍՕ 89-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի առկայության փաստը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի վերաբերյալ փաստաթղթերի, փոխադրվող բեռի առևտրային և բեռնային փաստաթղթերի, արգելքների և սահմանափակումների պահպանման փաստը հավաստող փաստաթղթերի (առկայության դեպքում), ստուգվում է նշված փաստաթղթերում օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների առկայության փաստը, համապատասխան տեղեկատվական համակարգով կամ թղթային եղանակով իրականացվում է ժամանման հաշվառումը և համապատասխան նշագրումներ կատարվում տեղեկատվական համակարգում կամ թղթային փաստաթղթերում:

44. Ավտոմեքենայի բեռի և բեռնային մասի մաքսային հսկողության շրջանակներում՝ **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից կատարվում է բեռնային մասում կիրառված ապահովման միջոցների ամբողջականության ստուգում, ըստ անհրաժեշտության տեղադրվում են ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային ապահովման միջոցներ, ինչի վերաբերյալ համապատասխան նշագրումներ են կատարվում բեռը ուղեկցող փաստաթղթերում, իրականացվում է ավտոմեքենայի կշռում և հսկողության տվյալ փուլում անհրաժեշտ մյուս գործողությունները:

45. Առանձին դեպքերում, ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների պաշտոնատար անձանց որոշմամբ, առանձին կատեգորիայի անձանց փաստաթղթերը կարող են ստուգվել անմիջապես տրանսպորտային միջոցում: **Շվաքարան 1-ում (գոտի 1.2)** իրականացվող սահմանային վերահսկողության և մաքսային հսկողության գործառնությունները (գործառնությունները) կարող են իրականացվել միաժամանակ կամ գուգորդված:

46. Հսկողական միջոցառումները կատարելուց հետո և մաքսային օրենսդրության խախտումներ չհայտնաբերելու դեպքում տրանսպորտային միջոցը տեղաշարժվում է դեպի բեռնատար ավտոմեքենաների կայանատեղ **(գոտի 1.3)** կամ դեպի ՊՍԱԿ-ի ՀՀ կողմից մուտքի հսկման տաղավար **(ուղեփակոց №2)**:

47. Բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողության

շրջանակներում **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից, հարցման միջոցով, պարզվում է վարորդական խցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման կամ այլ հսկողության, արգելքների ու սահմանափակումների ենթակա ապրանքների առկայությունը, տրանսպորտային միջոցի ՀՀ ժամանման նպատակը, ըստ հարցման արդյունքների կարող է առաջարկվել, ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացնել ուղևորային մաքսային հայտարարագիր:

48. Փոխադրողի կողմից, ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով, ուղևորային մաքսային հայտարարագիր ներկայացնելու մտադրություն հայտնելու դեպքում ավտոմեքենան ուղեկցվում է մանրակրկիտ զննման գոտի (**գոտի 1.4**), իսկ փոխադրողին առաջարկվում է սահմանված կարգով ներկայացնել ուղևորային մաքսային հայտարարագիր՝ հայտարարագրման ենթակա ապրանքների հետ միասին՝ ֆիզիկական անձանց մաքսային հսկողության համար նախատեսված կարգով:

49. Ուղևորային մաքսային հայտարարագիրը սահմանված կարգով ներկայացվելուց հետո մաքսային հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրականացվում են բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների զննություն, հնարավոր թաքստոցների առկայության ստուգում, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության (առկայության դեպքում) դիտահորի միջոցով, որի արդյունքները համեմատվում են ներկայացված հայտարարագրի տվյալների հետ:

50. Մաքսային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ հետագա ընթացքը ապահովվում է օրենքով սահմանված կարգով:

51. Ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացվելու դեպքում՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում մաքսային հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձի կողմից **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** իրականացվում են բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների դիտարկում և մաքսային կանոնների խախտման հատկանիշներ նկատվելու դեպքում, այդ մասին գեկուցվում է ըստ վերադասության:

52. Ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացնելը և **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** առկա համապատասխան գծանշումը հատելը գնահատվում է որպես երկուդի համակարգի կանաչ ուղու ընտրություն և բեռնատար տրանսպորտային միջոցի

վարորդական խցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման ապրանքների բացակայության փաստի մասին հայտարարություն:

53. Ճվաքարան 1-ում (գոտի 1.2) հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների դիտարկման արդյունքում մաքսային կանոնների խախտման հատկանիշների առկայության վերաբերյալ գեկույցի դեպքում, մաքսային մարմնի բաժանմունքի պետը ապահովում է **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** առկա համապատասխան գծանշումը հատելուց հետո հսկողության ենթակա տրանսպորտային միջոցի փոխադրումը մանրակրկիտ զննման գոտի (**գոտի 1.4**), որտեղ իրականացվում է բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների զննություն, ինչի արդյունքներով որոշում է կայացվում մաքսային կանոնների խախտում արձանագրելու կամ այդպիսի խախտման բացակայության մասին:

54. Մաքսային կանոնների խախտումներ չհայտնաբերելու դեպքում ուղևորային մաքսային հայտարարագրի, կամ դրա բացակայության դեպքում, ավտոմեքենայի բեռնագրի դարձերեսին **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը կատարում է նշագրում այդ մասին և հաստատում այն սահմանված կարգով:

55. Ճվաքարան 1-ում (գոտի 1.2) դատարկ բեռնատար տրանսպորտային միջոցի համար սահմանված կարգով տրանսպորտային հայտարարագիր ներկայացնելու պարագայում անհրաժեշտ հսկողական գործառույթներից, բացթողումից, տրանսպորտային հայտարարագրում բացթողնման մասին գրառում կատարելուց և այն սահմանված կարգով հաստատելուց, կամ ավտոմեքենայի բեռնագրի կամ այլ փաստաթղթի վրա ☐դատարկ☐ գրառումը կատարելուց և այն սահմանված կարգով հաստատելուց հետո, համապատասխան տվյալները մուտքագրվում են սահմանահատման համակարգ և սահմանահատման համակարգում համապատասխան այլ պաշտոնատար անձանց կողմից անհրաժեշտ նշագրումներ կատարելուց հետո դրանք ուղևորվում են դեպի ՊՄԱԿ-ի ՀՀ կողմից մուտքի հսկման տաղավար (**ուղեփակոց №2**) և սույն սխեմայի 64-րդ կետով նախատեսված կարգով մուտք գործում ՀՀ տարածք:

56. Բեռնատար տրանսպորտային միջոցների կայանատեղի (**գոտի 1.3**) հասնելուց հետո բեռի համար մաքսային մարմին է ներկայացվում ԵԱՏՄ ՍՕ 107-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները պարունակող՝ ԵԱՏՄ ՍՕ 108-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը և ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված ☐Մաքսային տարանցում☐ մաքսային ընթացակարգով լրացված մաքսային հայտարարագիր, որի շրջանակներում, ռիսկերի կառավարման համակարգի

կիրառման արդյունքում որոշվում են ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները, որոնց համապատասխան, ըստ անհրաժեշտության, ավտոմեքենան ՀՀ ՊԵԿ նախագահի 2021 թվականի ապրիլի 22-ի N 399-Ա հրամանով սահմանված կարգով ենթարկվում է ռենտգեն դիտարկման և նկարահանման, կամ ռիսկերի նվազեցմանն ուղղված համակարգով առաջադրված այլ գործողությունների: Ձեռնարկված քայլերի մասին պաշտոնատար անձինք համապատասխան նշագրումներ են կատարում սահմանահատման համակարգում:

57. Սույն սխեմայի 56-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները չներկայացվելու պարագայում մաքսային մարմնի պաշտոնատար անձը սահմանված կարգով պահանջում է ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները, իսկ մինչև դրանց ներկայացումը բեռնատար տրանսպորտային միջոցը կայանվում է բեռնատար տրանսպորտային միջոցների կայանատեղիում **(գոտի 1.3)**՝ մաքսային հսկողության գոտու առանձին հատվածում:

58. Ժամանման պահից սկսած՝ 3 ժամվա ընթացքում սույն սխեմայի 56-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները չներկայացվելու պարագայում փոխադրվող ապրանքները ենթակա են հանձնման ժամանակավոր պահպանության կամ մաքսային տարածքից ետ արտահանման: Սույն կետում նշված ժամկետներում հայտարարագրման, ժամանակավոր պահպանության հանձնման կամ ետ արտահանման հետ կապված մաքսային մարմնի թույլտվությունը ստանալուն ուղղված մաքսային գործառնություններ չիրականացվելու դեպքում այդպիսի ապրանքները արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ ԵԱՏՄ ՄՕ 51-րդ գլխին համապատասխան:

59. Ռիսկերի կառավարման համակարգի առաջադրած ցուցումները կատարելուց հետո, կախված դրանց արդյունքներից, համապատասխան գրառումներ են կատարվում հայտարարագրման համակարգում, համակարգում իրականացվում է բեռի բացթողումը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում բեռը ուղեկցող փաստաթղթերում կամ հայտարարագրի թղթային տարբերակի վրա, հաստատվում սահմանված կարգով և համապատասխան նշագրումներ են կատարում սահմանահատման ԲԲ համակարգում:

60. [Մաքսային տարանցում] մաքսային ընթացակարգից տարբերվող ընթացակարգի ընտրությամբ մաքսային ձևակերպումները կատարելու նպատակով՝ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմնի պաշտոնատար անձանց են ներկայացվում ԵԱՏՄ ՄՕ 106-րդ հոդվածով նախատեսվող տեղեկությունները պարունակող մաքսային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը, ինքնուրույն կամ վարչական շենքում գործող մաքսային ներկայացուցչի միջոցով սահմանված կարգով լրացվում և ներկայացվում է ապրանքի հայտարարագիր և (կամ) տրանսպորտային միջոցի հայտարարագիր, կատարվում են փաստաթղթային և

փաստացի հսկողական անհրաժեշտ բոլոր գործառնությունները, ապահովվում են արգելքների ու սահմանափակումների պահպանումը, այդ թվում ըստ անհրաժեշտության՝ մանրակրկիտ գննությամբ, ինչի ավարտից և ապրանքների բացթողումից, ինչպես նաև անհրաժեշտ մաքսային գործառնությունները և մաքսային մարմինների կողմից իրականացվող տրանսպորտային կամ այլ հսկողության աշխատանքները կատարելուց հետո համապատասխան նշագրումներ են կատարում սահմանահատման համակարգում և բեռնատար տրանսպորտային միջոցը շարժվում է դեպի ՊՍԱԿ-ի ՀՀ կողմից մուտքի հսկման տաղավար (**ուղեփակոց № 2**):

61. Սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական վերահսկողության կամ հսկման ենթակա ապրանքների մաքսային ձևակերպումները կատարելու ընթացքում սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական սահմանային պետական վերահսկողության կամ հսկողության գործառնությունները ՊՍԱԿ-ում ներկայացված մաքսային մարմինների կողմից իրականացվում են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կազմված մեթոդական ուղեցույցին համապատասխան:

62. Փոխաբեռնման ենթակա բեռները փոխաբեռնվում են ՊՍԱԿ-ի տարածքում դրա համար նախատեսված վայրում, ինչից հետո սույն սխեմայի 56-րդ և 60-րդ կետերով սահմանված ընթացակարգով ենթարկվում են համապատասխան մաքսային ձևակերպումների:

63. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում, համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ ավտոմեքենան և բեռը կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ գնման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

64. ՀՀ կողմից ՊՍԱԿ-ի մուտքի հսկման տաղավարում (**ուղեփակոց №2**) միաժամանակ կամ հաջորդաբար հսկողություն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձը և սահմանապահ վերակարգը ստուգում են. մաքսային մարմնի պաշտոնատար անձը՝ անհրաժեշտ մաքսային ձևակերպումների իրականացված լինելու, բեռնագրի կամ այլ փաստաթղթերի վրա դրա մաքսային հսկողության աշխատանքները ավարտված լինելու մասին պաշտոնատար անձի հաստատված նշագրման և (կամ) (ԲՔ) սահմանահատման համակարգում անհրաժեշտ գրառումների և նշագրումների առկայության փաստը, ըստ անհրաժեշտության ստուգում կիրառված ապահովումների

նույնականացումը, իսկ դատարկ տրանսպորտային միջոցների պարագայում՝ բեռնագրի կամ այլ փաստաթղթերի վրա դրա մաքսային հսկողության աշխատանքները ավարտված լինելու մասին պաշտոնատար անձի հաստատված նշագրումը և (կամ) սահմանահատման համակարգում անհրաժեշտ գրառումների և նշագրումների առկայության փաստը, կատարում իր գործառույթներից բխող այլ անհրաժեշտ գործողություններ, իսկ սահմանապահ վերակարգը՝ սահմանային վերահսկողությունն անցնելու հանգամանքը ճշտելու նպատակով վարորդի պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում սահմանապահի ամսաթիվ-կնիքի առկայությունը և յուրաքանչյուրն իր մասով խախտումներ չհայտնաբերելու դեպքում թույլատրվում է բեռնատար տրանսպորտային միջոցի և վարորդի (վարորդների կամ ուղեկցողի) մուտքը ՀՀ:

6. ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀԱՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՍՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ) ԻՐԱՎԱՆԱՅՄԱՆ ՀԵՐԹԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

65. Բեռնատար տրանսպորտային միջոցների ՀՀ-ից բացթողնման գործընթացը կազմակերպելու նպատակով սահմանվում է պետական կառավարման մարմինների կողմից վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հետևյալ հաջորդականությունը.

- 1) մաքսային հսկողություն,
- 2) առանձին դեպքերում սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն,
- 3) սահմանային վերահսկողություն:

66. ՀՀ-ից մեկնելիս փոխադրողը (վարորդը) բեռնատար տրանսպորտային միջոցը մոտեցնում է ՊՍԱԿ-ի մուտքի հսկման տաղավարի (**ուղեփակոց №3**) մոտ և սահմանապահ վերակարգի թույլտվությամբ մուտք գործելով ՊՍԱԿ-ի տարածք (**գոտի 2.1**) անցնում է ռադիոակտիվ հսկողության շրջանակով (առկայության դեպքում) և ռադիոակտիվ ֆոնի ահագանգի բացակայության դեպքում՝ սահմանապահ վերակարգի կողմից ուղղորդվում է դեպի բեռնատար տրանսպորտային միջոցների հոսքուղիներ **շվաքարան 2 (գոտի 2.2)** կամ բեռնատար տրանսպորտի համար նախատեսված հսկման վայր: Այնուհետև հոսքուղուն մոտեցած բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդն ուղղորդվում է դեպի մաքսային հսկողության աշխատակիցների մոտ:

67. ՊՍԱԿ-ով մեկնող և (կամ) ԵԱՏՄ մաքսային տարածքից երրորդ երկրներ արտահանվող բեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցները մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձին են ներկայացնում ԵԱՏՄ ՍՕ 106-րդ կամ 107-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները պարունակող՝ ԵԱՏՄ ՍՕ 108-

րդ հողվածով նախատեսված փաստաթղթերը և (կամ) ԵԱՏՄ ՄՕ 105-րդ հողվածով նախատեսված փաստաթղթերը, որոնց ամբողջականությունը և փաստացի ավտոմեքենայի տվյալներին համապատասխանությունը ստուգվելուց հետո, ավտոմեքենան անցնում է **շվաքարան 2 (գոտի 2.2)**:

68. Փոխադրողը (վարորդը) բեռնատար տրանսպորտային միջոցը **շվաքարան 2-ին (գոտի 2.2)** մոտեցնում է բացառապես շվաքարանում առանձնացված բեռնային հոսքուղու առանձնացված ուղիներից մեկով:

69. **Շվաքարան 2 (գոտի 2.2)** հասնելուն պես փոխադրողը մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձին է ներկայացնում սույն սխեմայի 67-րդ կետում նշված՝ բեռի մաքսային ձևակերպման և հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը: Մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից հարցման միջոցով պարզվում է տրանսպորտային միջոցի ՀՀ-ից մեկնման նպատակը, վարորդական խցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման կամ այլ հսկողության, արգելքների ու սահմանափակումների ենթակա ապրանքների առկայությունը, ըստ հարցման արդյունքների կարող է առաջարկվել ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ուղևորային մաքսային հայտարարագիր, և (կամ) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 422 որոշմամբ սահմանված տրանսպորտային հայտարարագիր: Եթե մաքսային հսկողության գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ է ՊՍԱԿ-ի տարածքում լրացնել և ներկայացնել մաքսային հայտարարագրեր, ապա բեռնատար տրանսպորտային միջոցը կարող է կայանել ՀՀ կողմից մուտքի տաղավարից մինչև ՊՍԱԿ-ի վարչական շենքի արտահանման ուղղության կողմում տեղակայված հսկողության տարածքում (**գոտի 2.1**):

70. **Շվաքարան 2-ում (գոտի 2.2)** իրականացվում են նախ բեռի և բեռնային մասի, ապա վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնություններ և ավտոմեքենայի կշռում: Նշված փուլում մաքսային մարմինների կողմից տրանսպորտային միջոցում բեռի և բեռնային մասի, ապա վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնությունների իրականացմանը զուգահեռ սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների դիտագնում՝ պետական սահմանն ապօրինի հատելու փորձ կատարող անձ հայտնաբերելու նպատակով:

71. Վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնությունների շրջանակներում

ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացնելը և **շվաքարան 2-ում (գոտի 2.2)** առկա համապատասխան գծանշումը հատելը գնահատվում է որպես երկուդի համակարգի կանաչ ուղու ընտրություն և բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման ապրանքների բացակայության փաստի մասին հայտարարություն:

72. Վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնությունների շրջանակներում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից **շվաքարան 2-ում (գոտի 2.2)** իրականացվում են ավտոմեքենայի արտաքին զննում և վարորդական խցիկի զննություն, ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հնարավոր թաքստոցների առկայության ստուգում և իր գործառնություններից բխող անհրաժեշտ մյուս գործողությունները:

73. Մաքսային օրենսդրության խախտումներ չհայտնաբերելու դեպքում՝ ՊՍԱԿ-ում ծառայություն իրականացնող մաքսային մարմինների կողմից բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների մաքսային հսկողությունը համարվում է ավարտված:

74. Փոխադրվող բեռի և բեռնային մասի հսկողական գործառնությունների շրջանակներում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից **շվաքարան 2-ում (գոտի 2.2)** իրականացվում են բեռնային մասում կիրառված ապահովման միջոցների ամբողջականության և համապատասխանության ստուգում, ըստ անհրաժեշտության տեղադրվում են ՀՀ մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային ապահովման միջոցներ, կիսոված մաքսային ապահովման միջոցները համեմատվում են բեռը ուղեկցող փաստաթղթերում առկա տվյալների հետ, բեռը ուղեկցող փաստաթղթերում և ազգային մեկ պատուհան համակարգում իրականացնում է փաստացի ելքի հաստատում, նախատեսված դեպքերում թղթային կրիչով փաստաթղթերում հաստատում այն սահմանված կարգով և թույլատրում տրանսպորտային միջոցի ելքը ՀՀ-ից:

75. Արտահանման ընթացակարգերով ձևակերպումները ՊՍԱԿ-ում կատարելու անհրաժեշտության դեպքում ՊՍԱԿ-ի մուտքի հսկման տաղավարից անցնելուց հետո, տրանսպորտային միջոցը տեղափոխվում է ՊՍԱԿ-ի արտահանման ուղղում գտնվող բեռնատար ավտոմեքենաների մաքսային հսկողության համար նախատեսված վայր **(գոտի 2.1)**, որից հետո փողադրողը մոտենում է ՊՍԱԿ-ի վարչական շենքում տեղակայված մաքսային մարմնի պաշտոնատար անձանց աշխատավայր, որտեղ ներկայացնում է ԵԱՏՄ ՍՕ 89-րդ և 92-րդ հոդվածներով նախատեսված փաստաթղթերը, 106-րդ կամ 107-րդ հոդվածներով նախատեսված տեղեկությունները պարունակող՝

ԵԱՏՄ ՍՕ 108-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը, ինքնուրույն կամ վարչական շենքում գործող մաքսային ներկայացուցչի միջոցով սահմանված կարգով լրացվում և մաքսային մարմինն է ներկայացվում ԵԱՏՄ ՍՕ 105-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ապրանքի հայտարարագիր և (կամ) տրանսպորտային միջոցի հայտարարագիր, կատարվում են փաստաթղթային և հսկողական անհրաժեշտ բոլոր գործառնությունները, ապահովվում են արգելքների ու սահմանափակումների պահպանումը, ապրանքների բացթողումը, ինչի մասին համապատասխան նշագրումներ են կատարվում մաքսային հայտարարագրում և հայտարարագրման համակարգում, հաստատվում սահմանված կարգով, ինչի ավարտից, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից իրականացվող տրանսպորտային կամ այլ հսկողության աշխատանքները կատարելուց հետո տրանսպորտային միջոցը շարժվում է դեպի **շվաքարան 2 (գոտի 2.2):**

76. Շվաքարան 2-ում (գոտի 2.2) մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից սույն սխեմայի 75-րդ կետով նկարագրված տրանսպորտային միջոցի հսկողական գործառնությունները իրականացվում են սույն սխեմայի 70-րդ և 72-րդ կետերով նախատեսված հաջորդականությամբ:

77. Սույն սխեմայի 75-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները չներկայացվելու պարագայում մաքսային մարմնի պաշտոնատար անձը սահմանված կարգով պահանջում է ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները, իսկ մինչև դրանց ներկայացումը՝ բեռնատար տրանսպորտային միջոցը կայանվում է մաքսային հսկողության համար նախատեսված վայրում **(գոտի 2.2)**՝ մաքսային հսկողության գոտու առանձին հատվածում:

78. **Շվաքարան 2-ում (գոտի 2.2)** դատարկ տրանսպորտային միջոցների համար սահմանված կարգով թղթային կրիչով տրանսպորտային հայտարարագիր ներկայացնելու պարագայում անհրաժեշտ հսկողական գործառնություններից, բացթողումից, տրանսպորտային հայտարարագրում բացթողնման մասին գրառում կատարելուց և այն սահմանված կարգով հաստատելուց, կամ ավտոմեքենայի բեռնագրի կամ այլ փաստաթղթի վրա ☐դատարկ☐ գրառումը կատարելուց և այն սահմանված կարգով հաստատելուց, ըստ անհրաժեշտության սահմանված կարգով փաստացի ելքի հաստատում իրականացնելուց հետո, թույլատրվում է բեռնատար տրանսպորտային միջոցի անցումը սահմանային վերահսկողության գոտի **շվաքարան 2-ում (գոտի 2.2):**

79. Սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական վերահսկողության կամ հսկման ենթակա ապրանքների մաքսային ձևակերպումները կատարելու ընթացքում սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական սահմանային պետական վերահսկողության կամ հսկողության գործառնությունները ՊՄԱԿ-ում ներկայացված մաքսային մարմինների կողմից իրականացվում են ՀՀ սննդամթերքի

անվտանգության տեսչական մարմնի կողմից կազմված մեթոդական ուղեցույցին համապատասխան:

80. Մաքսային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում բեռնատար տրանսպորտային միջոցը տեղափոխվում է տրանսպորտի մանրակրկիտ զննման համար նախատեսված վայր՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը ապահովելու համար:

81. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում, համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ մեքենան կարող է սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ զննման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

82. Ապրանքների արտահանումը կարող է իրականացվել միայն մաքսային մարմնի թույլտվությամբ:

83. Մաքսային հսկողական աշխատանքների ավարտից հետո՝ տվյալ բեռնատար տրանսպորտային միջոցներն անցնում են սահմանային վերահսկողության գոտի:

84. Սույն սխեմայի 35-37-րդ կետերով նշված գործողություններն իրականացնելուց հետո սահմանապահը ձևակերպում է անձի և տրանսպորտային միջոցի փաստաթղթերը, տվյալները մուտքագրում է ՍԷԿՏ համակարգ, պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում կատարում է համապատասխան նշում (ամսաթիվ-կնիքի դրոշմում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ) և թույլատրում է փոխադրողին (վարորդին) իր տրանսպորտային միջոցով շարժվել դեպի ՊՍԱԿ-ի՝ ՀՀ պետական սահմանի կողմից տեղակայված մուտքի հսկման տաղավարին (**ուղեփակոց №4**) և մեկնել ՀՀ տարածքից:

7. ՀՀ ԺԱՄԱՆՈՂ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐԴԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

85. Ավտոբուսներով և մարդատար տրանսպորտային միջոցներով, երրորդ երկրներից անձանց և ապրանքների դեպի ՀՀ բացթողնման գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պետական

կառավարման մարմինների կողմից վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հետևյալ հաջորդականությունը.

1) սահմանային վերահսկողություն,

2) մաքսային հսկողություն,

3) առանձին դեպքերում սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն:

86. Փոխադրողը (վարորդը) ավտոբուսը (մարդատար տրանսպորտային միջոցը) մոտեցնում է ՊՍԱԿ-ի ներմուծման ուղղությամբ ՀՀ պետական սահմանի կողմից տեղակայված մուտքի հսկման տաղավարին (**ուղեփակոց №1**), որտեղից մուտք գործելով ՊՍԱԿ-ի տարածք (**գոտի 1.1**) անցնում է ռադիոակտիվ հսկողության շրջանակով (առկայության դեպքում) և ռադիոակտիվ ֆոնի ահագանգի բացակայության դեպքում՝ սահմանապահ վերակարգն ուղղորդում է ավտոբուսների և մարդատար տրանսպորտային միջոցների շարժը դեպի հոսքուղիներ: Հոսքուղուն մոտեցած ավտոբուսներն ու մարդատար տրանսպորտային միջոցները կանգնեցվում են սահմանապահ վերակարգի կողմից վարչական շենքի մուտքից առաջ տեղադրված ուղևորների ռադիոակտիվ հսկման համակարգի մոտ (առկայության դեպքում), ուղևորները իջեցվում են տրանսպորտային միջոցից և իրենց ձեռքի իրերով ու ուղեբեռներով ուղղորդվում են դեպի վարչական շենքում գտնվող ուղևորների սպասարկման սրահ (անհրաժեշտության դեպքում մարդատար տրանսպորտային միջոցներով ուղևորվող ուղևորները կարող են սահմանային վերահսկողությունն անցնել առանց տրանսպորտային միջոցից իջեցվելու), իսկ վարորդներն ուղղորդվում են դեպի մարդատար տրանսպորտային միջոցների հոսքուղում **շվաքարան 1 (գոտի 1.2)** տեղակայված փաստաթղթերի ստուգման խցիկ և սահմանապահ հսկիչին ներկայացնում իրենց և տրանսպորտային միջոցների պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերը:

87. Սույն սխեմայի 29-34-րդ կետերով նշված գործողություններն իրականացնելուց հետո սահմանապահը ձևակերպում է փաստաթղթերը և տվյալները մուտքագրում է ՍԷԿՏ համակարգ, պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում կատարում է համապատասխան նշում (ամսաթիվ-կնիքի դրոշմում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ) և թույլատրում է փոխադրողին (վարորդին) իր տրանսպորտային միջոցով անցնել մաքսային հսկողության գոտի: Նշված փուլում պետական սահմանի հատման կանոնների խախտման նշանների, պետական սահմանի հատման կանոնների և պետական սահմանի անցման կետերի ռեժիմի կանոնների խախտողներին ժամանակին հայտնաբերելու նպատակով սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է սահմանահատող անձանց հոսքերի դիտարկում:

88. Մաքսային հսկողության գոտի անցնելով ուղևորները մաքսային հսկողության են ենթարկվում ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով սահմանված կարգով:

89. Ուղևորներից ազատ ավտոբուսը և մարդատար տրանսպորտային միջոցը բացառապես շվաքարանում առանձնացված ուղևորային հոսքուղու առանձնացված ուղիներից մեկով շարժվում են դեպի ՊՄԱԿ-ի վարչական շենքի ներմուծման ուղղության կողմում տեղակայված **շվաքարան 1 (Գոտի 1.2):**

90. Ուղևորային հոսքուղում **շվաքարան 1-ում (գոտի 1.2)** մարդատար տրանսպորտային միջոցների վարորդների առանց գրավոր հայտարարագրման պարտավորության անձնական օգտագործման ապրանքները անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներով տեղափոխելու կարգի ու պայմանների պահպանմանն ուղղված մաքսային հսկողության գործառնությունները, մարդատար տրանսպորտային միջոցների և դրանց վարորդների անձնական օգտագործման ապրանքների բացթողումը, ինչպես նաև մաքսային մարմիններին վերապահված այլ գործառնությունները իրականացվում են մաքսային մարմինների կողմից:

91. Մարդատար տրանսպորտային միջոցներում ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների, սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական հսկման ենթակա ապրանքների բացակայության դեպքում, դրա և ուղևորների, իսկ ավտոբուսների դեպքում՝ դրանց վարորդների առանց գրավոր հայտարարագրման պարտավորության անձնական օգտագործման ապրանքների մաքսային հսկողության աշխատանքները իրականացվում են **շվաքարան 1-ի (գոտի 1.2)** ուղևորային հոսքուղում առանց ավտոմեքենան լքելու՝ մաքսային մարմինների կողմից:

92. Մաքսային մարմինների կողմից՝ մարդատար տրանսպորտային միջոցի վարորդական խցիկի, բեռնախցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողության շրջանակներում հարցման միջոցով պարզվում է վարորդական խցիկում, բեռնախցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման կամ այլ հսկողության, արգելքների ու սահմանափակումների ենթակա ապրանքների առկայությունը, տրանսպորտային միջոցի ՀՀ ժամանման նպատակը, ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացվելու դեպքում՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում իրականացվում են ավտոմեքենայի վարորդական խցիկի, բեռնախցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների դիտարկում և մաքսային կանոնների խախտման հատկանիշներ նկատվելու դեպքում, այդ մասին գեկուցվում է ըստ վերադասության: Նշված փուլում մաքսային մարմինների կողմից տրանսպորտային

միջոցում բեռի և բեռնային մասի, ապա վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնությունների իրականացմանը զուգահեռ սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է տրանսպորտային միջոցի բեռնային մասի (բեռնախցիկի) և վարորդական խցիկի (սրահի) դիտագնում՝ պետական սահմանն ապօրինի հատելու փորձ կատարող անձ հայտնաբերելու նպատակով:

93. Ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացնելը և **շվաքարան 1-ում** առկա համապատասխան գծանշումը հատելը գնահատվում է որպես երկուղի համակարգի կանաչ ուղու ընտրություն և տրանսպորտային միջոցի վարորդական խցիկում, բեռնախցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման ապրանքների բացակայության փաստի մասին հայտարարություն:

94. Խախտումների բացակայության դեպքում՝ մարդատար տրանսպորտային միջոցը, շարժվելով դեպի ՊՄԱԿ-ի ՀՀ կողմից մուտքի հսկման տաղավար, սույն սխեմայի 64-րդ կետով նախատեսված կարգով մուտք է գործում ՀՀ տարածք:

95. Ավտոբուսի կամ մարդատար տրանսպորտային միջոցի վարորդի մոտ ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների առկայության դեպքում առաջարկվում է ներկայացնել ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված ուղևորային մաքսային հայտարարագիր, ավտոմեքենան ուղեկցվում է մանրակրկիտ զննման գոտի (**գոտի 1.4**), իսկ փոխադրողին առաջարկվում է սահմանված կարգով լրացված ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնել հայտարարագրման ենթակա ապրանքների հետ միասին՝ ֆիզիկական անձանց մաքսային հսկողության համար նախատեսված կարգով:

96. ՊՄԱԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ ժամանող ուղևորների համար նախատեսված սրահում նրանց կողմից փոխադրվող անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման կարգի ու պայմանների պահպանման, ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների առկայության մաքսային հսկողության գործառնություններն իրականացվում են մաքսային մարմինների կողմից՝ ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով սահմանված կարգով:

97. ՊՄԱԿ-ի վարչական շենքի մաքսային հսկողության գոտի անցնելուց հետո ուղևորները, ԵԱՏՄ ՍՕ 257-րդ հոդվածով նախատեսված կարգով, ինքնուրույն ընտրություն են իրականացնում մաքսային հսկողության երկուղի համակարգում, ընտրելով «կարմիր» կամ «կանաչ» ուղիներից որևէ մեկը, ինչին համապատասխան էլ՝ ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով նախատեսված կարգով իրականացվում են ՀՀ ժամանող ուղևորների անձնական օգտագործման ապրանքների մաքսային հսկողության աշխատանքները:

98. Ուղևորի կողմից «կանաչ» ուղին ընտրելը և «կանաչ» ուղու ելքը հատելը համարվում է բանավոր հայտարարություն՝ հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին:

99. «Կարմիր» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, ովքեր տեղափոխում են մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ: «Կարմիր» ուղին կարող են ընտրել նաև այն ուղևորները, ովքեր, չունենալով մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ, ցանկություն են հայտնում լրացնելու ուղևորային մաքսային հայտարարագիր:

100. Ուղևորի կողմից «կարմիր» ուղին ընտրելու պարագայում՝ նա մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնում է ուղևորային մաքսային հայտարարագիր, որը լրացվում և հաստատվում (ստորագրվում) է ուղևորի կողմից՝ մինչև ապրանքները մաքսային հսկողության ներկայացնելը:

101. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը, մինչև մաքսային հայտարարագրի ընդունումը և գրանցումը՝ հիշեցնում է հայտարարագրում ոչ հավաստի տվյալների ներկայացման պարագայում առաջացող պատասխանատվության մասին:

102. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից սահմանված կարգով ընդունվում և գրանցվում է ուղևորային մաքսային հայտարարագիրը: Գրանցված հայտարարագիրը դառնում է իրավաբանական նշանակություն փաստերի մասին վկայող փաստաթուղթ, որից հետո ուղևորային մաքսային հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու նպատակով մաքսային մարմնի պաշտոնատար անձը իրականացնում է դրանց փաստացի հսկողության գործառնություններ:

103. Ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնելուց և մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հսկողական անհրաժեշտ գործառնություններ իրականացնելուց հետո, եթե առաջանում է մաքսային վճարումներ կատարելու անհրաժեշտություն, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից կազմվում և անձին է տրամադրվում սահմանված կարգով լրացված մաքսային մուտքի օրդեր, որին համապատասխան մաքսային վճարումները կատարվելուց հետո, սահմանված կարգով իրականացվում է ապրանքների բացթողումը:

104. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից անհրաժեշտության դեպքում, օրենքով սահմանված կարգով, պահանջվում են մաքսային օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկություններ:

105. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի»)՝

գնահատման արդյունքում, կամ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «կանաչ» ուղու ելքը հատած ուղևորն իր հետ տեղափոխում է գրավոր հայտարարագրման ենթակա կամ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված ապրանքներ, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է իր գործառույթները թխող օրենքով սահմանված մաքսային հսկողության գործառույթները, մասնավորապես համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում ՊՍՄԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ ժամանող ուղևորների համար նախատեսված սրահում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ ուղևորը և ուղեբեռը կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ զննման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման (այդ թվում մարմնի ռենտգեն սկանավորման համակարգով կամ սահմանված կարգով՝ անձի մարմնի զննությամբ)՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

106. Սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական վերահսկողության կամ հսկման ենթակա ապրանքների մաքսային ձևակերպումները կատարելու ընթացքում սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական սահմանային պետական վերահսկողության կամ հսկողության գործառնությունները ՊՍՄԿ-ում ներկայացված մաքսային մարմինների կողմից իրականացվում են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կազմված մեթոդական ուղեցույցին համապատասխան՝ նախքան բացթողումը իրականացնելը:

107. Անձի կողմից ապրանքի հայտարարագիր ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելու ցանկություն հայտնելու դեպքում ինքնուրույն կամ վարչական շենքում գործող մաքսային ներկայացուցչի միջոցով սահմանված կարգով լրացվում և ներկայացվում է ապրանքի հայտարարագիր, ինչից հետո, մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ռիսկերի կառավարման համակարգի առաջադրած ցուցումներին համապատասխան, իրականացվում են փաստաթղթային և փաստացի հսկողական անհրաժեշտ բոլոր գործառնությունները, ապահովվում են արգելքների ու սահմանափակումների պահպանումը, այդ թվում ըստ անհրաժեշտության՝ մանրակրկիտ զննությամբ, ինչի ավարտից և ապրանքների բացթողումից հետո անձը դուրս է գալիս ՊՍՄԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ ժամանող ուղևորների համար նախատեսված սրահից և, շարժվելով դեպի ՀՀ կողմից ՊՍՄԿ-ի մուտքի հսկման տաղավար (**ուղեփակոց №2**), դուրս է հալիս ՊՍՄԿ-ի տարածքից կամ ժամանող ուղևորների և տրանսպորտային միջոցի հանդիպման կետում նստում է տրանսպորտային միջոցը և շարժվում դեպի ուղեփակոց №2, որտեղ սահմանապահ վերակարգը սահմանային վերահսկողությունն անցնելու հանգամանքը ճշտելու նպատակով վարորդի պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում ստուգում է սահմանապահի ամսաթիվ-կնիքի առկայությունը և թույլատրում մեկնել անցման կետի տարածքից և մուտք գործել ՀՀ:

8. ՀՀ-ԻՑ ՄԵԿՆՈՂ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐԴԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

108. Ավտոբուսների և մարդատար տրանսպորտային միջոցների ՀՀ-ից բացթողնման գործընթացը կազմակերպելու նպատակով սահմանվում է պետական կառավարման մարմինների կողմից վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հետևյալ հաջորդականությունը.

- 1) մաքսային հսկողություն,
- 2) առանձին դեպքերում սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն,
- 3) սահմանային վերահսկողություն:

109. ՀՀ-ից մեկնելիս վարորդը մարդատար տրանսպորտային միջոցը մոտեցնում է ՊՍԱԿ-ի մուտքի հսկման տաղավարի (**ուղեփակոց №3**) մոտ և սահմանապահ վերակարգի թույլտվությամբ մուտք գործելով ՊՍԱԿ-ի տարածք (**գոտի 2.1**) անցնում է ռադիոակտիվ հսկողության շրջանակով (առկայության դեպքում) և ռադիոակտիվ ֆոնի ահագանգի բացակայության դեպքում՝ սահմանապահ վերակարգի կողմից ուղղորդվում է դեպի մարդատար տրանսպորտային միջոցների հոսքուղիներ **շվաքարան 2 (գոտի 2.2)** կամ մարդատար տրանսպորտի համար նախատեսված հսկման վայր: Այնուհետև հոսքուղուն մոտեցած տրանսպորտային միջոցի վարորդն ուղղորդվում է դեպի մաքսային հսկողության աշխատակիցների մոտ:

110. Ավտոբուսները, մինչև շվաքարան հասնելը, կանգառ են կատարում վարչական շենքի մուտքից առաջ տեղադրված ուղևորների ռադիակտիվ հսկման համակարգի մոտ (առկայության դեպքում), ուղևորներն իջեցվում են, տրանսպորտային միջոցից (անհրաժեշտության դեպքում մարդատար տրանսպորտային միջոցներով ուղևորվող ուղևորները կարող են սահմանային վերահսկողությունն անցնել առանց տրանսպորտային միջոցից իջեցվելու), որից հետո ուղևորները ձեռքի իրերի և ուղեբեռի հետ միասին անցնում են ուղևորների ռադիակտիվ հսկման համակարգի շրջանակով (առկայության դեպքում) և ռադիոակտիվ ֆոնի ահագանգի բացակայության դեպքում՝ մուտք են գործում ՊՍԱԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ-ից մեկնող ուղևորների համար նախատեսված սրահ:

111. Ուղևորներից ազատ ավտոբուսը և մարդատար տրանսպորտային միջոցները բացառապես շվաքարանում առանձնացված ուղևորային հոսքուղու առանձնացված ուղիներից մեկով շարժվում են դեպի ՊՍԱԿ-ի վարչական շենքի արտահանման ուղղության կողմում տեղակայված **շվաքարան 2 (գոտի 2.2)**:

112. Ուղևորային հոսքուղում մարդատար տրանսպորտային միջոցների վարորդներն առանց գրավոր հայտարարագրման պարտավորության անձնական օգտագործման ապրանքները անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներով տեղափոխելու կարգի ու պայմանների պահպանմանն ուղղված մաքսային հսկողության գործառնությունները, մարդատար տրանսպորտային միջոցների վարորդներին անձնական օգտագործման ապրանքների բացթողնումն իրականացնում են մաքսային մարմինները:

113. Մարդատար տրանսպորտային միջոցներում սկնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների բացակայության դեպքում, դրա և ուղևորների, իսկ ավտոբուսների դեպքում՝ նաև դրանց վարորդների առանց գրավոր հայտարարագրման պարտավորության անձնական օգտագործման ապրանքների մաքսային հսկողության աշխատանքները իրականացվում են **շվաքարան 2-ի (գոտի 2.2)** ուղևորային հոսքուղում առանց ավտոմեքենան լքելու՝ մաքսային մարմինների կողմից՝ ավտոմեքենայի վարորդական խցիկի, բեռնախցիկի և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողության շրջանակներում հարցման միջոցով պարզվում է վարորդական խցիկում, բեռնախցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման կամ այլ հսկողության, արգելքների ու սահմանափակումների ենթակա ապրանքների առկայությունը, տրանսպորտային միջոցի ՀՀ-ից մեկնման նպատակը, ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացվելու դեպքում՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում իրականացվում են ավտոմեքենայի վարորդական խցիկի, բեռնախցիկի և մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների դիտարկում և մաքսային կանոնների խախտման հատկանիշներ նկատվելու դեպքում, այդ մասին զեկուցվում է ըստ վերադասության:

114. Ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացնելը և **շվաքարան 2-ում (գոտի 2.2)** առկա համապատասխան գծանշումը հատելը գնահատվում է որպես երթուղային համակարգի կանաչ ուղու ընտրություն և տրանսպորտային միջոցի վարորդական խցիկում, բեռնախցիկում և ավտոմեքենայի մաքսային ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածներում հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման ապրանքների բացակայության փաստի մասին հայտարարագրում: Նշված փուլում մաքսային մարմինների կողմից տրանսպորտային միջոցում բեռի և բեռնային մասի, ապա վարորդական խցիկի և ավտոմեքենայի մաքսային

ապահովումների միջոցներով չապահովագրված հատվածների հսկողական գործառնությունների իրականացմանը գուգահեռ սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է տրանսպորտային միջոցի բեռնային մասի (բեռնախցիկի) և վարորդական խցիկի (սրահի) դիտագննում՝ պետական սահմանն ապօրինի հատելու փորձ կատարող անձ հայտնաբերելու նպատակով:

115. Ավտոբուսի կամ մարդատար տրանսպորտային միջոցի վարորդի մոտ ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների առկայության դեպքում առաջարկվում է ներկայացնել ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված ուղևորային մաքսային հայտարարագիր, ավտոմեքենան ուղեկցվում է ՊՍԱԿ-ի արտահանման ուղում գտնվող ավտոմեքենաների մաքսային հսկողության համար նախատեսված վայր **(գոտի 2.1)**, իսկ փոխադրողին առաջարկվում է սահմանված կարգով լրացված ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնել հայտարարագրման ենթակա ապրանքների հետ միասին՝ ֆիզիկական անձանց մաքսային հսկողության համար նախատեսված կարգով:

116. Ուղևորների մոտ ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների առկայության դեպքում նրանք կարող են մուտք գործել ՊՍԱԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ-ից մեկնող ուղևորների համար նախատեսված սրահ, որտեղ մաքսային հսկողության են ենթարկվում մաքսային մարմինների կողմից՝ ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով սահմանված կարգով:

117. Ֆիզիկական անձինք՝ ՊՍԱԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ-ից մեկնող ուղևորների համար նախատեսված սրահում ԵԱՏՄ ՍՕ 257-րդ հոդվածով նախատեսված կարգով ինքնուրույն ընտրություն են իրականացնում երկուդի համակարգում, ընտրելով «կարմիր» կամ «կանաչ» ուղիներից որևէ մեկը, ինչին համապատասխան էլ՝ ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով նախատեսված կարգով իրականացվում են ՀՀ-ից մեկնող ուղևորների անձնական օգտագործման ապրանքների մաքսային հսկողության աշխատանքները:

118. Ուղևորի կողմից «կանաչ» ուղին ընտրելը և նշված «կանաչ» ուղու ելքը հատելը համարվում է բանավոր հայտարարություն՝ հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին:

119. «Կարմիր» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, ովքեր տեղափոխում են մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ: «Կարմիր» ուղին կարող են ընտրել նաև այն ուղևորները, ովքեր, չունենալով մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ, ցանկություն են հայտնում լրացնելու ուղևորային մաքսային հայտարարագիր:

120. Ուղևորի կողմից «կարմիր» ուղին ընտրելու պարագայում՝ նա մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնում է ուղևորային մաքսային հայտարարագիր, որը լրացվում և հաստատվում (ստորագրվում) է ուղևորի կողմից՝ մինչև ապրանքները մաքսային հսկողության ներկայացնելը:

121. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը, մինչև մաքսային հայտարարագրի ընդունումը և գրանցումը՝ հիշեցնում է հայտարարագրում ոչ հավաստի տվյալների ներկայացման պարագայում առաջացող պատասխանատվության մասին:

122. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից սահմանված կարգով ընդունվում և գրանցվում է ուղևորային մաքսային հայտարարագիրը: Գրանցված հայտարարագիրը դառնում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի մասին վկայող փաստաթուղթ, որից հետո ուղևորային մաքսային հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավաստությունը ստուգելու նպատակով մաքսային մարմնի պաշտոնատար անձը իրականացնում է դրանց փաստացի հսկողության գործառնություններ:

123. Ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնելուց և մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հսկողական անհրաժեշտ գործառնություններ իրականացնելուց հետո, եթե առաջանում է մաքսային վճարումներ կատարելու անհրաժեշտություն, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից կազմվում և անձին է տրամադրվում սահմանված կարգով լարցված մաքսային մուտքի օրդեր, որին համապատասխան մաքսային վճարումները կատարվելուց հետո, սահմանված կարգով իրականացվում է ապրանքների բացթողնումը:

124. Անձի կողմից ապրանքի հայտարարագիր ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելու ցանկություն հայտնելու դեպքում ինքնուրույն կամ վարչական շենքում գործող մաքսային ներկայացուցչի միջոցով սահմանված կարգով լրացվում և ներկայացվում է ապրանքի հայտարարագիր, ինչից հետո, մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ռիսկերի կառավարման համակարգի առաջադրած ցուցումներին համապատասխան, իրականացվում են փաստաթղթային և փաստացի հսկողական անհրաժեշտ բոլոր գործառնությունները, ապահովվում են արգելքների ու սահմանափակումների պահպանումը, այդ թվում ըստ անհրաժեշտության՝ մանրակրկիտ զննությամբ, ինչի ավարտից հետո, խախտումների բացակայության դեպքում, սահմանված կարգով իրականացվում է ապրանքների բացթողնումը:

125. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով պահանջվում են մաքսային օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկություններ:

126. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում, կամ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «կանաչ»

ուղու ելքը հատած ուղևորն իր հետ տեղափոխում է գրավոր հայտարարագրման ենթակա կամ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված ապրանքներ, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է իր գործառույթները քիտղ օրենքով սահմանված մաքսային հսկողության գործառույթները, մասնավորապես համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում ՊՍԱԿ-ի վարչական շենքի՝ ՀՀ-ից մեկնող ուղևորների համար նախատեսված սրահում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ ուղևորը և ուղեբեռը կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ զննման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման (այդ թվում մարմնի ռենտգեն սկանավորման համակարգով կամ սահմանված կարգով՝ անձի մարմնի զննությամբ)՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

127. Սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական վերահսկողության կամ հսկման ենթակա ապրանքների մաքսային ձևակերպումները կատարելու ընթացքում սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական սահմանային պետական վերահսկողության կամ հսկողության գործառնությունները ՊՍԱԿ-ում ներկայացված մաքսային մարմինների կողմից իրականացվում են Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կազմված մեթոդական ուղեցույցին համապատասխան՝ նախքան բացթողումը իրականացնելը:

128. Ֆիզիկական անձանց ուղեբեռի նկատմամբ՝ ՊՍԱԿ-ի վարչական շենքում մաքսային հսկողական աշխատանքների ավարտից հետո վերջիններս անցնում են սահմանային վերահսկողության գոտի:

129. 35-37-րդ կետերով նշված գործողություններն իրականացնելուց հետո սահմանապահը ձևակերպում է ուղևորի փաստաթղթերը, տվյալները մուտքագրում է ՍԷԿՏ համակարգ, պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում կատարում է համապատասխան նշում (ամսաթիվ-կնիքի դրոշմում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ), և անձը դուրս է գալիս ՀՀ-ից մեկնող ուղևորների համար նախատեսված սրահից դեպի մեկնող ուղևորների և տրանսպորտային միջոցի հանդիպման կետ (տրանսպորտային միջոցների վարորդները սահմանային վերահսկողության գործողություններն անցնում են մարդատար տրանսպորտային միջոցների հոսքուղում), այնուհետև տրանսպորտային միջոցով կամ հետիոտն շարժվում է դեպի **(ուղեփակոց №4)** և մեկնում ՀՀ տարածքից: Նշված փուլում պետական սահմանի հատման կանոնների խախտման նշանների, պետական սահմանի հատման կանոնների և պետական սահմանի անցման կետերի ռեժիմի կանոնների խախտողներին ժամանակին հայտնաբերելու նպատակով սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է սահմանահատող անձանց հոսքերի դիտարկում:

9. ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

130. Մաքսային օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ՊՍԱԿ-ի տարածքում գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանակավոր պահպանության վերցնելու աշխատանքները իրականացվում են մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից՝ ՀՀ ՊԵԿ նախագահի հաստատած ձևի անդորրագիր լրացնելու միջոցով:

131. Ժամանակավոր պահպանության վերցված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները մաքսային մարմինների տիրապետման կամ հսկողության տակ գտնվող պահեստարաններում կամ հրապարակներում պահպանվելու նպատակով հետագա պահպանության են հանձնվում մաքսային կետի նյութական պատասխանատու պաշտոնատար անձին՝ հատուկ այդ նպատակով բացված մատյանում, առկայության դեպքում՝ հատուկ այդ նպատակով մշակված էլեկտրոնային ծրագրային տիրույթում, համապատասխան նշագրումներ անելու միջոցով՝ նշելով ժամանակավոր պահպանության վերցված ապրանքների տեսականու, քանակի և քաշի, ժամանակավոր պահպանության վերցնելու ամիս ամսաթվի, ժամի, պատկանելիության, ժամանակավոր պահպանության հանձնողի, փոխադրողի և պատշաճ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն:

132. Ժամանակավոր պահպանության վերցված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները նյութական պատասխանատուին հետագա պահպանության հանձնվելու դեպքում պարտադիր ներկայացվում է նաև Ժամանակավոր պահպանության վերցնելու անդորրագրի լրացված և մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հաստատված պատճենը:

133. Ժամանակավոր պահպանության վերցված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները մաքսային կետի նյութական պատասխանատու պաշտոնատար անձի կողմից մաքսային մարմինների տիրապետման կամ հսկողության տակ գտնվող պահեստարաններից կամ հրապարակներից բաց են թողնվում դրանց վերաբերյալ համապատասխան մաքսային ձևակերպումների և հսկողության (օր.ապրանքի մաքսային հայտարարագիր, տարանցիկ մաքսային հայտարարագիր, ուղևորային մաքսային հայտարարագիր) կամ դրանց հետագա ընթացքի կամ վերաարտահանման մասին (օր.ապրանքներն ու տրանսպորտային միջոցները վերցնելու մասին արձանագրություն, վերաարտահանման մասին մակագրված դիմում, կամ այլ փաստաթուղթ) լիազոր պաշտոնատար անձանց կողմից կայացված որոշման և

պահպանության համար սահմանված վճարների վճարված լինելու փաստը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում:

134. Նյութական պատասխանատու անձը հատուկ այդ նպատակով բացված մատյանում, առկայության դեպքում՝ հատուկ այդ նպատակով մշակված էլեկտրոնային ծրագրային տիրույթում, համապատասխան նշագրումներ անելուց հետո ժամանակավոր պահպանության վերցված ապրանքների ու տրանսպորտային միջոցների տնօրինումը փոխանցում է մաքսային մարմնի պաշտոնատար անձին՝ իր մոտ պահպանելով նաև ապրանքներն ու տրանսպորտային միջոցները ժամանակավոր պահպանության կարգավիճակից հանելու համար հիմք ծառայած փաստաթղթի պատճենը և այդ մասին նշելով մատյանում:

10. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

135. ՊՍԱԿ-ում հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների, ինչպես նաև այլ ծառայությունների միջև համագործակցությունը կարող է կազմակերպվել և իրագործվել գրավոր և (կամ) բանավոր:

136. Հերթափոխների միջև համագործակցությունն իրականացվում է հերթափոխների պետերի կողմից՝ օգտագործելով հնարավոր առկա բոլոր միջոցները:

137. Անցման կետում ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձինք մաքսային մարմինների ստորաբաժանումների համապատասխան պաշտոնատար անձանց տեղեկացնում են.

1) անցման կետում հաղորդակցությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին,

2) ուժեղացված սահմանային ծառայության անցնելու մասին,

3) լրացուցիչ ռեժիմային սահմանափակումներ մտցնելու մասին,

4) ստորաբաժանումը մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերելու մասին,

5) մաքսային հսկողություն անցած և ՀՀ ելքի մերժում ստացած քաղաքացիների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ,

6) անցման կետում հայտնաբերված հանցագործությունների մասին, որոնք վերաբերում են ՀՀ ՊԵԿ իրավասությանը,

7) անցման կետում անկարգությունների և կոնֆլիկտային իրավիճակի առաջացման մասին,

8) մաքսային մարմինների աշխատակիցների անձնական անվտանգության սպառնալիքների մասին,

9) տարերային աղետների և վթարների մասին,

10) այլ դեպքերի և փաստերի մասին, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անցման կետի իրադրության վրա:

138. Անցման կետում մաքսային մարմինների ստարաքաժանումների պաշտոնատար անձինք ՀՀ ԱՄԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստարաքաժանման պաշտոնատար անձանց տեղեկացնում են.

1) տրանսպորտային միջոցներում և բեռներում թաքնված անձ հայտնաբերելու մասին,

2) տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի և նույնականացման համարի անհամապատասխանության մասին,

3) ուժեղացված մաքսային ռեժիմի անցնելու մասին,

4) անցման կետում հայտնաբերված հնարավոր խախտումների մասին, որոնք առնչվում են ՀՀ ԱՄԾ ՍԶ իրավասությանը,

5) ՀՀ ԱՄԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման զինծառայողների անձնական անվտանգության սպառնալիքների մասին,

6) տարերային աղետների և վթարների մասին,

7) այլ դեպքերի և փաստերի մասին, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անցման կետի իրադրության վրա:

139. Անցման կետում իրադրության փոփոխման դեպքում հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների ստորաբաժանումները համատեղ գործողություններ իրականացնելիս գործում են համագործակցության պլանների դրույթների համաձայն:

140. Արտակարգ իրավիճակներում ավտոմոբիլային անցման կետերում ՀՀ պետական մարմինների գործողություններն ու փոխհամագործակցության ուղղությունները սահմանվում են նախօրոք հաստատված փոխհամագործակցության պլանով:

141. Անցման կետի պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության բնույթի և փոխանակման կարգի վերաբերյալ կարող են կատարվել փոփոխություններ համատեղ խորհրդակցությունների և կողմերի ղեկավարների գործնական հանդիպումների ժամանակ:

142. ՀՀ պետական մարմինների գործունեության կոորդինացման, անցման կետում իրադրության վերլուծության, ուղևորահոսքի փոփոխման կանխատեսումների, ինչպես նաև անցման կետի աշխատանքի արդիականացման և կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակման և իրագործման նպատակով շահագրգիռ մարմինների ներգրավվածությամբ եռամսյակը մեկ անցկացվում են համատեղ խորհրդակցություններ:

143. TT TC տեսակի մաքսային տարանցում ընթացակարգով ՀՀ փոխադրվող ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների և տրանսպորտային միջոցների փաստացի մաքսային հսկողությունը և Սաքսային տարանցումը՝ ընթացակարգի պայմանների պահպանմանը համապատասխանությունը հավաստվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 170 որոշմամբ սահմանված կարգով՝ համապատասխան մաքսային հայտարարագրի վրա կնիք դնելու միջոցով և (կամ) մաքսային տարանցում ընթացակարգի ավարտը համակարգչային հսկողական միջավայրում հաստատելու միջոցով, ինչպես նաև ղեկավարվելով սույն սխեմայով նախատեսված դրույթներով:

144. TT TC տեսակի մաքսային տարանցում ընթացակարգով մեկնող ապրանքների մաքսային հսկողության աշխատանքները իրականացվում են սույն սխեմայի 69-րդ, 70-րդ, 72-րդ, իսկ մաքսային տարանցում ընթացակարգով հայտարարագրման գործառնությունները մաքսային կետ-բաժնում կատարելու անհրաժեշտության դեպքում՝ 75-րդ և 76-րդ կետերով սահմանված կարգով:

145. TT TC տեսակի մաքսային տարանցում ընթացակարգով ՀՀ փոխադրվող բեռների տարանցման ավարտի հաստատման ընթացքում մաքսային կանոնների խախտում հայտնաբերվելու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձինք գործում են սահմանված կարգին համապատասխան:

146. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Սաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի N 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում կամ հայտարարագրման համակարգում՝ ռիսկերի կառավարման համակարգի կիրառման արդյունքում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումներով ցուցման դեպքում TT TC տեսակի մաքսային տարանցում ընթացակարգով ՀՀ փոխադրվող ապրանքները և դրանք փոխադրող տրանսպորտային միջոցները կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ գնման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման՝ հետագա ընթացքը ապահովելու համար:

147. Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում, ՊՄԱԿ-ի արտահանման (ՀՀ-ից ելքի) և ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղություններում գտնվող տրանսպորտային միջոցները կարող են մաքսային և սահմանապահ ծառայությունների համաձայնությամբ տեղափոխվել ներմուծման (ՀՀ մուտքի) ուղղությունից դեպի արտահանման (ՀՀ-ից ելքի) ուղղություն և հակառակը

հատուկ այդ նպատակով ներմուծման և արտահանման ուղղությունները տարանջատող արգելապատնեշում նախատեսված դարպասների միջոցով:

148. Տրանսպորտային միջոցում, բեռում կամ ֆիզիկական անձանց մոտ ռադիացիոն հսկողության սարքավորումների կողմից ռադիացիոն բարձր ֆոնի գրանցման ահազանգի դեպքում մաքսային մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից իրականացվում են քայլեր ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 553-Ն որոշման, ՀՀ պետատոմհսկողության 2007 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 13-Մ-1375 գրության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի նախագահի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի N 120-Ա հրամանով հաստատված կանոնակարգի կետերին համապատասխան:

149. ՀՀ ԱԱԾ և ՀՀ ՊԵԿ փոխադարձ համաձայնությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության փոփոխությունների դեպքում, սխեմայում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

Հավելված № 2

Հայաստանի Հանրապետության ազգային
անվտանգության ծառայության տնօրենի
«30» դեկտեմբերի 2022թ. N 134 -Լ
և

Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
«30» դեկտեմբերի 2022թ. N 1407 -Լ
համատեղ հրամանի

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՕԴԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ
ԿԵՏԵՐՈՒՄ ԱՆՁԱՆՑ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՒՏՔԻ (ԵԼՔԻ),
ԲԵՌՆԵՐԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՕԴԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ
ԱՆՁԱՆՑ ՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ
ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՅ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՀՀ) պետական սահմանի (այսուհետ՝ նաև պետական սահման) օդային անցման կետերով (այսուհետ՝ նաև ՊՍԱԿ կամ օդային անցման կետ) անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, այլ գույքի, կենդանիների տեղափոխման, պետական սահմանի օդային անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու, ինչպես նաև ազգային անվտանգության և մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից գործողությունների իրականացման հերթականության տեխնոլոգիական սխեման և նկարագիրը (այսուհետ՝ սխեմա) մշակվել է ՀՀ միջազգային պայմանագրերի, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին՝ պայմանագրի, «Պետական սահմանի մասին», «Սահմանապահ զորքերի մասին», Սաքսային կարգավորման մասին՝ օրենքների, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» N 702-Ն, «Հայաստանի Հանրապետության պետական սահմանում սահմանային ռեժիմը

և պետական սահմանի անցման կետերի ռեժիմը սահմանելու մասին» N 735-Ն, 2004 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 944-Ն որոշումների, ինչպես նաև ՀՀ տարածքում սահմանային և մաքսային ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան և սահմանում է ՀՀ պետական սահմանի օդային անցման կետերում անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի (այսուհետ՝ անձանց և ապրանքների) նկատմամբ սահմանահատման գործընթացում վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հիմնական գործառույթների հաջորդականությունը, դրանց ժամանման և մեկնման ժամանակ իրականացվող պետական հսկողության կառուցվածքը և պաշտոնատար անձանց կողմից իրականացվող քայլերի և գործողությունների հերթականությունը:

2. ՀՀ պետական սահմանի օդային անցման կետերում պետական սահմանը հատող անձինք և ապրանքները ենթակա են սահմանային վերահսկողության, մաքսային և ավիացիոն անվտանգության հսկողության, ինչպես նաև օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության:

3. Վերահսկողությունն ու հսկողությունն իրականացվում են մշտապես՝ հատուկ սարքավորված վայրերում, ծառայողական շինություններում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև անմիջապես օդային տրանսպորտային միջոցում, որի նպատակն է սահմանահատումը կանոնակարգող օրենսդրության նորմերի պահպանումը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով համապատասխան հսկողությունների և վերահսկողության անընդհատության ու հուսալիության ապահովումը, անձանց և ապրանքների սահմանային հսկողության տակ գտնվելու՝ անցման կետի տարածքում և այնտեղ ներկայացված պաշտոնատար անձանց լիազորությունների և գործառնությունների (գործառույթների) իրականացման ողջ ժամանակահատվածում:

4. Անցման կետերի տարածքում, որտեղ իրականացվում են հսկողություն և վերահսկողություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարող են մտցվել լրացուցիչ ռեժիմային սահմանափակումներ:

5. Վերահսկողությունն ու հսկողությունն իրականացնող մարմինների աշխատակիցների և սպասարկող անձնակազմի մուտքը օդանավակայանի հատուկ վերահսկելի և վերահսկելի գոտիներ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, թույլատրվում է օդային անցման կետերի ադմինիստրացիայի կողմից տրված անցագրերի առկայության դեպքում:

6. Օդային անցման կետերում անցման կետերի ռեժիմի պահպանումը և հսկումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ) սահմանապահ զորքերի (այսուհետ՝ նաև ՍԶ) սահմանային վերահսկողության ստորաբաժանումների կողմից

իրականացվում է միայն սահմանային վերահսկողության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով: ՀՀ ԱՄԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների պաշտոնատար անձինք վերահսկում են անցման կետերի ռեժիմի կանոնների պահպանումն օդային անցման կետերում:

7. Անձանց և ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունը, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մաքսային մարմիններին վերապահված այլ հսկողությունը կամ վերահսկողությունը սահմանված կարգով իրականացվում է մաքսային մարմինների կողմից:

8. Անձանց և ապրանքների վերահսկողության և հսկողության կազմակերպման ու իրականացման կարգերը, այդ նպատակով օգտագործվող միջոցներն ու մեթոդները սահմանվում են ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ:

9. Պետական սահմանում ՀՀ շահերին սպառնալիք ծագելու դեպքում ՀՀ ԱՄԾ սահմանապահ զորքերի հրամանատարը կարող է ժամանակավորապես դադարեցնել հաղորդակցությունը պետական սահմանի անցման կետերում:

10. Ուղևորների և բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող օդային տրանսպորտային միջոցների կայանման տեղն ու տևողությունը որոշում են օդային անցման կետերի (օդանավակայանի ադմինիստրացիայի) ղեկավարները՝ համաձայնեցնելով ՀՀ ԱՄԾ սահմանապահ զորքերի և մաքսային մարմինների հետ:

11. Սույն սխեման գործում է օդային բոլոր անցման կետերում և, հաշվի առնելով յուրաքանչյուր անցման կետի առանձնահատկությունները, թողունակությունը, ենթակառուցվածքների առկայությունն ու տեղաբաշխվածությունը, տեղային այլ պայմանները, ՀՀ ԱՄԾ ՍԶ և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) մաքսային մարմինների համաձայնությամբ կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների:

2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Սույն սխեմայում կիրառվող հասկացություններն են.

1) **Ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքներ**՝ օրենսդրությամբ ակնհայտ առևտրային քանակության նախատեսված արժեքային կամ բնաիրային չափը գերազանցող ապրանքներ.

2) **Անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ**՝ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող փաստաթուղթ, որը տրված է ՀՀ կամ պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը.

3) **Ապրանքներ**՝ ՀՀ պետական սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները,

էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ ուղևորներ և ապրանքներ տեղափոխող փոխադրամիջոցները.

4) **Ավիացիոն անվտանգության հսկողություն**՝ հատուկ միջոցառումներ, որոնք ուղղված են օդանավ, վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներ գննքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և այլ վտանգավոր առարկաների տեղափոխման կանխմանը.

5) **Երկքաղաքացի**՝ այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն: ՀՀ երկքաղաքացի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն.

6) **Կացության կարգավիճակ**՝ ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կամ ՀՀ վարչապետի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու ՀՀ տարածքում այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում.

7) **Խմբի (հերթափոխի, բաժանմունքի) պետ**՝ ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ, որը ղեկավարում է հերթափոխի (սահմանապահ վերակարգերի) ծառայությունը և հանդիսանում է հերթափոխի ողջ անձնակազմի պետը.

8) **Մաքսային հսկողություն**՝ ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված դրույթների պահպանման ստուգման և ապահովման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ.

9) **Մաքսային տարանցում**՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄՕ) սահմանված մաքսային ընթացակարգ.

10) **Սահմանային վերահսկողություն**՝ միջոցառումների համակարգ, որն ապահովում է պետական սահմանի հատման օրինականությունը.

11) **Սահմանապահ վերակարգ**՝ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների մեկ զինծառայող կամ զինծառայողների խումբ, որը պետական սահմանի անցման կետում կամ դրա տարածքից դուրս կատարում է ՀՀ պետական սահմանի պահպանության գործառույթ.

12) **Վավեր փաստաթուղթ**՝ փաստաթուղթ, որը համապատասխանում է սահմանված նմուշին, պատկանում է այն ներկայացնողին, տրված է իրավասու մարմնի կողմից, պատշաճ կերպով լրացված է (ձևավորված է), վավերական է, չի պարունակում կեղծիքներ.

13) **Մուտքի վիզա կամ արտոնագիր**՝ ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործել ՀՀ, տարանցիկ երթևեկել ՀՀ տարածքով, գտնվել ՀՀ-ում և դուրս գալ ՀՀ-ից՝ դրանում նշված նպատակներով, պայմաններով և ժամկետներում.

14) **Տրանսպորտային միջոցներ**՝ բոլոր տեսակի փոխադրամիջոցները, որոնք օգտագործվում են ՀՀ պետական սահմանով ուղևորների և ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով, այդ թվում՝ բեռնարկղերը (կոնտեյներները) և այլ օժանդակ փոխադրամիջոցները:

15) **Ուղեբեռ**՝ ուղևորների անձնական իրերը, ձեռքի իրերը, օդանավի անձնակազմի, ինչպես նաև սահմանված կարգով նրա կազմում գրանցված անձանց ուղեբեռը, որը քաղաքացիական ավիացիայի շահագործողի համաձայնությամբ ձևակերպված է օդանավով փոխադրելու համար:

16) **Ուղևորային հոսքուղի**՝ ՊՄԱԿ-ի ներմուծման և արտահանման ուղղությամբ տանիքածածկ տարածքներում (շվաքարաններ) միայն մարդատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված ուղիներ:

17) **Օտարերկրացի**՝ ՀՀ քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք):

3. ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍՈՒՏՔԻ (ԵԼՔԻ), ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԾԱՐԺՎԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

13. ՀՀ ԱԱԾ և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինները ՊՄԱԿ-ում գործում են փոխհամաձայնեցված, սերտ համագործակցության, փոխօգնության, փոխլրացման միջոցով, ՊՄԱԿ-ի առանձին հատվածներում նաև համատեղ: ՊՄԱԿ-ում իրականացվող գործառնությունների (գործառույթների) իրականացման շրջանակներում ՀՀ ԱԱԾ և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների միջև առաջացած՝ օրենսդրությամբ չկարգավորված բոլոր խնդիրները լուծվում են համատեղ քննարկումների շրջանակներում՝ փոխհամաձայնության միջոցով:

14. Պետական այլ մարմինների՝ ՀՀ ԱԱԾ և ՀՀ ՊԵԿ մաքսային մարմիններին վերապահված լիազորություններն իրացվում են ըստ անհրաժեշտության տվյալ մարմինների կողմից կազմված և հաստատված մեթոդական ուղեցույցների հիման վրա, տվյալ մարմինների կողմից դրանց իրականացման ընտրանքային վերահսկողության պայմաններում:

15. Անձանց և տրանսպորտային միջոցների փաստաթղթերի ստուգումն իրականացվում է փաստաթղթերի ստուգման խցիկներում, որոնք հագեցված են համակարգչային և հատուկ տեխնիկայով: Առանձին դեպքերում, ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների պաշտոնատար անձանց որոշմամբ, առանձին կատեգորիայի անձանց փաստաթղթերը կարող են ստուգվել անմիջապես օդային տրանսպորտային միջոցում կամ շարժասանդուղքի մոտ:

16. Ուղևորների փաստաթղթերի ստուգման և ձևակերպման վրա ծախսվող ժամանակը կազմում է մինչև 3 րոպե:

17. Ուղևորների սպասարկման հարմարավետությունն ապահովելու նպատակով սպասասրահներում կարող են առանձնացվել առանձին հոսքուղիներ, որտեղ հնարավորություն է տրվում արտահերթ սպասարկելու որոշակի կատեգորիայի անձանց (օդային տրանսպորտի անձնակազմի անդամներ, հաշմանդամներ, մանկահասակ երեխաներով ուղևորներ և այլն):

18. Պաշտոնական պատվիրակությունների անդամները, դիվանագիտական անձնագրերով անձինք և բարձրակարգ սպասարկման իրավունք ունեցող անձինք սպասարկվում են առանձին սրահներում:

19. Օդային անցման կետերում անձանց և ապրանքների նկատմամբ իրականացվող հսկողություններն ու վերահսկողությունը պետք է իրականացվեն օդանավակայանի աշխատանքի տեխնոլոգիային համապատասխան, որը չպետք է գերազանցի օդային տրանսպորտային միջոցի կայանման ժամանակը:

20. ՀՀ պետական սահմանի օդային անցման կետերում մաքսային հսկողություն և սահմանային վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումները ձեռնարկում են համապատասխան միջոցներ ուղևորահոսքի տրանսպորտային միջոցների շարժն արագ կազմակերպելու և անցման կետերում չհիմնավորված կուտակումները բացառելու համար:

4. ԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՑԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Օդային ՊՄԱԿ-ում ներկայացված ՀՀ ԱՄԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումներն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում՝

1) պետական սահմանի հատման օրինականությունն ապահովելու նպատակով ստուգում են անձանց պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերը,

2) պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթերում կատարում են համապատասխան նշումներ,

3) օտարերկրացիներին տրամադրում են ՀՀ մուտքի վիզա, մերժում են մուտքի վիզայի տրամադրումը կամ տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած են ճանաչում,

4) ՀՀ քաղաքացիների անձնագրում կատարում են օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում,

5) իրականացնում են Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով իրավախախտում կատարած տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողություն,

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով իրենց իրավասությանը վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը և նշանակում վարչական տույժեր,

7) իրականացնում են պետական սահմանի ռեժիմը, սահմանային ռեժիմն ու պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչական ձերբակալում՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետով,

8) իրականացնում են պետական սահմանը հատող անձանց տվյալների հաշվառում և տեղեկատվական համակարգ մուտքագրում,

9) վերահսկում են անցման կետի ռեժիմի կանոնների պահպանումը:

22. Պետական սահմանով անձանց ՀՀ մուտք գործելիս ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների գինձառայողները ստուգում են՝

1) ՀՀ քաղաքացիների դեպքում՝

ա. ՀՀ քաղաքացու անձնագիրը կամ

բ. ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիրը կամ

գ. ՀՀ դիվանագիտական անձնագիրը կամ

դ. ՀՀ վերադարձի վկայականը կամ

ե. ճամփորդական այլ վավեր փաստաթուղթը՝ ՀՀ երկքաղաքացիների դեպքում,

2) օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝

ա. սովորական անձնագիրը և ՀՀ այցելության մուտքի վիզայի կամ Էլեկտրոնային վիզայի կամ ՀՀ կացության կարգավիճակի առկայությունը, եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ կամ

բ. ծառայողական (պաշտոնական) անձնագիրը և ՀՀ պաշտոնական մուտքի վիզայի կամ ՀՀ կացության կարգավիճակի կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության նամակի առկայությունը, եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ կամ

գ. դիվանագիտական անձնագիրը և ՀՀ դիվանագիտական մուտքի վիզայի կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության նամակի առկայությունը, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ,

3) քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝

ա. ճամփորդական փաստաթուղթը և ՀՀ մուտքի վիզայի կամ Էլեկտրոնային վիզայի կամ ՀՀ կացության կարգավիճակի առկայությունը, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ,

4) ՀՀ-ում չհաշվառված տրանսպորտային միջոցներով օտարերկրացու նկատմամբ կայացված վարչական ակտերի առկայությունը: Առկայության դեպքում օտարերկրացուն

հանձնվում է վարչական ակտը (ինչպես նաև վարչական ակտի կատարման կարգի և չկատարման իրավական հետևանքների մասին հուշաթերթիկը), իսկ վարչական ակտով դրված պարտավորությունները, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում օտարերկրացուն ՀՀ մուտքի վիզայի տրամադրումը մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում, կամ մուտքը ՀՀ արգելվում է՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրվանից մեկ տարի ժամկետով:

23. ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների գինձառայողները օտարերկրացիներին անցման կետերում տրամադրում են մուտքի վիզա:

24. Օտարերկրացիների մոտ երկու անձնագրի (ճամփորդական փաստաթղթերի) առկայության դեպքում ձևակերպումն իրականացվում է այն անձնագրով (ճամփորդական փաստաթղթով), որին տրված է ՀՀ մուտքի վիզան, իսկ ՀՀ-ի հետ առանց մուտքի վիզայի ռեժիմով պետությունների քաղաքացիների դեպքում քաղաքացու ցանկությամբ:

25. Եթե փաստաթղթերի ընդհանուր ստուգման ժամանակ հայտնաբերվել են հատկանիշներ, որոնք կարող են վկայել փաստաթղթի կեղծված, անվավեր լինելու մասին կամ կորած և անվավեր փաստաթղթերի հաշվառումներով անցնող փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում անցկացվում է փաստաթղթի հատուկ ստուգում, որը պետք է անցկացվի 3 ժամից ոչ ավելի տևողությամբ և չգերազանցի օդանավի կայանման ժամանակը:

26. Առանց անձնագրի, դրան փոխարինող փաստաթղթի կամ անվավեր անձնագրով ՀՀ ժամանած կամ ՀՀ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ մուտքն արգելված կամ ՀՀ ԱԳԾ ՍԶ կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացու մուտքը չի թույլատրվում ՀՀ տարածք, և հնարավորության դեպքում օտարերկրացին անմիջապես վերադարձվում է իր ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել է, նույն փոխադրողի տրանսպորտային միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ՀՀ է ժամանել ՀՀ-ում ապաստանի իրավունք (փախստականի կարգավիճակ, ապաստան կամ քաղաքական ապաստան) հայցելու նպատակով:

27. Օրենքով սահմանված կարգով օտարերկրացու մուտքը ՀՀ չթույլատրելու և նրան ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել է, վերադարձնելու անհրաժեշտության դեպքում ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձն այդ մասին տեղեկացնում է փոխադրողին և կազմակերպում է վերադարձման գործընթացը՝ հաշվի առնելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում հնարավոր կլինի իրականացնել օտարերկրացու փոխադրումը:

28. Վերադարձման ենթակա անձի (անձանց) վերաբերյալ ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձը փոխադրողին տեղեկացնում է նախօրոք՝ թոփաքային անվտանգությունն ապահովող նախագգուշական միջոցներ ձեռնարկելու համար:

29. Օտարերկրացու վերադարձման դեպքում ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձի կողմից կազմվում է վերադարձման ակտ՝ համապատասխան պետության իրավասու մարմիններին փոխանցելու նպատակով:

30. ՀՀ մուտքի թույլտվություն չունեցող օտարերկրացին իրեն վերաբերող փաստաթղթերի հետ միասին սահմանապահների կողմից փոխանցվում է այն փոխադրողին, որն իրականացրել է տվյալ օտարերկրացու փոխադրումը ՀՀ:

31. Անմիջապես հետ վերադարձման անհնարինության դեպքում այդպիսի օտարերկրացիները կարող են պահվել անցման կետի տարանցիկ գոտում կամ անցման կետում տեղակայված հատուկ կացարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

32. ՀՀ-ից մեկնելիս ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների գինժառայողները ստուգում են՝

1) ՀՀ քաղաքացիների դեպքում՝

ա. ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիրը կամ

բ. ՀՀ դիվանագիտական անձնագիրը կամ

գ. ՀՀ քաղաքացու անձնագիրը և օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականությունը (այն հաստատող կնիքի բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիներին արգելվում է մեկնել ՀՀ-ից) կամ

դ. ճամփորդական այլ վավեր փաստաթուղթը՝ ՀՀ երկքաղաքացիների դեպքում,

2) օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝

ա. ճամփորդական փաստաթուղթը (սովորական, ծառայողական, պաշտոնական, դիվանագիտական անձնագիր, վերադարձի վկայական և այլն) և մինչև դուրս գալու պահը ՀՀ տարածքում նրա օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայությունը, եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Օտարերկրացիների մոտ երկու անձնագրի (ճամփորդական այլ փաստաթղթերի) առկայության դեպքում ձևակերպումն իրականացվում է օտարերկրացու նախընտրած անձնագրով (ճամփորդական փաստաթղթով),

3) քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝

ա. ճամփորդական փաստաթուղթը և մինչև դուրս գալու պահը ՀՀ տարածքում նրա օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայությունը (ՀՀ մուտքի վիզա կամ էլեկտրոնային վիզա կամ ՀՀ կացության

կարգավիճակ), եթե այլ կարգ ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ,

4) ՀՀ-ում չհաշվառված տրանսպորտային միջոցներով օտարերկրացու նկատմամբ կայացված վարչական ակտերի առկայությունը: Առկայության դեպքում օտարերկրացուն հանձնվում է վարչական ակտը, (ինչպես նաև վարչական ակտի կատարման կարգի և չկատարման իրավական հետևանքների մասին հուշաթերթիկը) Վարչական ակտով դրված պարտավորությունները, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում օտարերկրացու մուտքը ՀՀ արգելվում է:

33. Օտարերկրացիների կողմից ՀՀ-ում առանց վավերական վիզայի (արտոնագրի) կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթով բնակվելու ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկության կարգի խախտման դեպքեր հայտնաբերելիս, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ ԱՄԾ ՍԶ իրավասու պաշտոնատար անձինք քննում են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր և նշանակում վարչական տույժեր: Վարչական ակտով դրված պարտավորություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում օտարերկրացու մուտքը ՀՀ արգելվում է:

34. Եթե փաստաթղթերի ընդհանուր ստուգման ժամանակ հայտնաբերվել են հատկանիշներ, որոնք կարող են վկայել փաստաթղթի կեղծված, անվավեր լինելու մասին կամ կորած և անվավեր փաստաթղթերի հաշվառումներով անցնող փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում սահմանապահների կողմից անցկացվում է փաստաթղթի հատուկ ստուգում: Փաստաթղթերի հատուկ ստուգումը պետք է անցկացվի 3 ժամից ոչ ավելի տևողությամբ և չգերազանցի օդային տրանսպորտային միջոցի կայանման ժամանակահատվածը:

35. Եթե փաստաթղթերի ստուգման ժամանակ անձը չի ներկայացրել պետական սահմանը հատելու անհրաժեշտ փաստաթղթեր կամ վերջինիս ելքը ՀՀ-ից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արգելված է, ապա վերջինիս սահմանահատումը մերժվում է, այդ մասին սահմանապահները տեղեկացնում են մաքսային մարմիններին և ավիացիոն անվտանգության աշխատակիցներին:

36. Օդային ՊՍԱԿ-ում ներկայացված ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք, որոնց վերապահված են օդային անցման կետի տարածքում հսկողական գործառնություններ իրականացնելու լիազորություններ, իրականացնում են.

1) Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) միասնական մաքսային տարածք ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանման և մեկնման հաշվառման գործառնություններ.

2) Ժամանող կամ մեկնող տրանսպորտային միջոցների և ապրանքների համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայության ստուգման և դրանցում մաքսային

օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների առկայության ստուգման գործառնություններ.

3) Տարանցիկ մաքսային հայտարարագրերի ընդունման, գրանցման, բացթողման և ավարտի մաքսային գործառնություններ, նշանակման վայր հասցնելու ժամկետների և փաստի նկատմամբ հսկողության իրականացման գործառնություններ.

4) Մաքսային օրենսդրության ակտերի՝ ներմուծման և արտահանման արգելքներ և սահմանափակումներ նախատեսող պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման (այսուհետև արգելքներ և սահմանափակումներ) գործառնություններ.

5) Ռիսկերի նվազեցման միջոցառումների ցուցումների և տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման գործառնություններ.

6) Կիրառվող մաքսային ընթացակարգի պայմանների պահպանման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման գործառնություններ.

7) Ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանակավոր պահպանության հանձնման և դրանց պահպանության նկատմամբ հսկողության իրականացման գործառնություններ.

8) ՀՀ այլ մաքսային մարմիններում արտահանում նախատեսող ընթացակարգերով հայտարարագրված և ՀՀ տարածքից դուրս բերվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ փաստացի դուրսբերման փաստով պայմանավորված հսկողության իրականացման և ելքի հաստատման իրականացման գործառնություններ.

9) Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ ՊՄԱԿ-ում իրականացման ենթակա հսկողական միջոցառումների իրականացման, հաշվարկման և գանձման ենթակա հարկերի, տուրքերի և այլ վճարների հաշվարկման և գանձման գործընթացի իրականացման գործառնություններ.

10) Ֆիզիկական անձանց կողմից ԵԱՏՄ մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքները տեղափոխելու, ԵԱՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու եւ դրանք օգտագործելու կարգի ու պայմանների պահպանմանն ուղղված, ժամանակավոր պահպանման, մաքսային հայտարարագրման և անձնական օգտագործման ապրանքների բացթողման հետ կապված, սահմանով փոխադրվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողության իրականացման գործառնություններ.

11) Հայտնաբերված խախտումների և մաքսանենգության դեպքերի արձանագրման, իրենց իրավասությունների շրջանակներում վարչական վարույթների ընթացքի ապահովման իրականացման գործառնություններ.

12) Իրականացված գործողությունների փաստը հաստատելու վերաբերյալ թղթային եղանակով ներկայացված փաստաթղթերի վրա գրառումների, կնիքների, դրոշմակնիքների դրոշմման, ինչպես նաև տվյալ գործողությունների իրականացման

տեղեկատվական համապատասխան համակարգերում հաստատման գործառնություններ, եթե այդպիսիք նախատեսված են.

13) Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական հսկման ենթակա ապրանքների վերահսկողության իրականացման գործառնություններ.

14) Ապրանքների և տրանսպորտային միջոցների նշանակման վայր հասցնելու ժամկետների և փաստի նկատմամբ հսկողության իրականացում.

15) Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ ռիսկերի գնահատման արդյունքում, համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ ժամանած կամ մեկնող տրանսպորտային միջոցի (օդանավի) մանրակրկիտ գնման իրականացում:

5. ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

37. Օդային տրանսպորտային միջոցներով անձանց և ապրանքների դեպի ՀՀ բացթողնման գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պետական մարմինների կողմից վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հետևյալ հաջորդականությունը.

1) սահմանային վերահսկողություն,

2) մաքսային հսկողություն,

3) առանձին դեպքերում սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն:

38. Ստանալով օդանավի թռիչքի վերաբերյալ տեղեկատվությունը կենտրոնական դիսպետչերական կետի դիսպետչերը այն փոխանցում է շահագրգիռ մարմինների հերթապահ ծառայություններին՝ նշելով չվերթի համարը, օդանավի տեսակը, բորտային համարը, բեռնվածությունը, ժամանման հաշվարկային ժամը, հատուկ սպասարկման ենթակա ուղևորների և հիվանդների առկայությունը, շարժման գրաֆիկից շեղումները և այլն (Կենտրոնական դիսպետչերական կետի դիսպետչերը, յուրաքանչյուր օր ժամը 09:00-ին էլեկտրոնային փոստով, կանոնավոր և ոչ կանոնավոր չվերթների, ինչպես նաև չվերթների գրաֆիկի փոփոխության վերաբերյալ առկա տեղեկատվությունը տրամադրում է շահագրգիռ մարմիններին):

39. Համաճարակային առումով վարակված տարածքներից ժամանող օդանավերի մասին տեղեկատվությունն անմիջապես փոխանցվում է մաքսային մարմնին:

40. Օդանավի ժամանման մասին դիսպետչերը տեղեկատվությունը փոխանցում է շահագրգիռ մարմինների հերթապահ ծառայություններին՝ նշելով կայանման վայրը (կայանատեղի համարը), ուղևորների քանակը, օդանավում հիվանդների և արտաքսվածների առկայությունը:

41. Օդային տրանսպորտի կայանատեղ ժամանելուն պես սահմանապահ վերակարգը տեսազննում է մերձակա տարածքը, որից հետո մաքսային տեսուչը և ավիացիոն անվտանգության աշխատակիցը համատեղ վերահսկում են ուղեբեռի և բեռների բեռնաթափման գործընթացը:

42. Ուղևորների իջեցումից հետո սահմանապահ վերակարգը և մաքսային տեսուչն իրականացնում են օդային տրանսպորտի դիտարկում:

43. Ժամանող բեռնատար օդանավերը բեռնաթափվում են թռիչքուղու այդ նպատակով նախատեսված կայանատեղիում, (բացառությամբ այն ապրանքների, որոնք ԵԱՏՄ ՍՕ 12-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, պետք է անհապաղ արտահանվեն ԵԱՏՄ մաքսային տարածքից, և այն ապրանքների, որոնք գտնվում են օդանավերի մեջ և ենթակա չեն օդանավերից դատարկման ԵԱՏՄ մաքսային տարածքում) և ստացվող բեռները տեղափոխվում և տեղադրվում են բեռնային մասի՝ օդանավակայանի վարչական շենքի ներսում տեղակայված մաքսային պահեստի պահպանման տարածք (Գոտի 3):

44. Ստացված բեռները բեռնային մասի՝ օդանավակայանի վարչական շենքի ներսում տեղակայված մաքսային պահեստի պահպանման տարածք մուտքագրվելուց հետո սահմանված կարգով (օդանավակայանի տեխնոլոգիական գործընթացով (ժամանակացույցով) սահմանված ժամանակի ընթացքում) փոխադրողի, կամ մաքսային ներկայացուցչի, կամ փոխադրողի հանձնարարությամբ գործող այլ անձանց կողմից մաքսային մարմին է ներկայացնում ժամանման մասին ծանուցում: Ժամանման մասին ծանուցման հաշվառման շրջանակներում մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ստուգվում են բեռը ուղեկցող՝ ԵԱՏՄ ՍՕ 89-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների առկայության փաստը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի վերաբերյալ փաստաթղթերի, փոխադրվող բեռի առևտրային և բեռնային փաստաթղթերի, արգելքների և սահմանափակումների պահպանման փաստը հավաստող փաստաթղթերի(առկայության դեպքում), ստուգվում է նշված փաստաթղթերում օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների առկայության փաստը, համապատասխան տեղեկատվական համակարգով կամ թղթային եղանակով իրականացվում է ժամանման հաշվառումը:

45. Փոխադրողի կամ ԵԱՏՄ ՍՕ 83-րդ հոդվածում նշված այլ անձանց կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (ժամանման մասին ծանուցումից հետո 3 ժամվա ընթացքում) իրականացվում են ստացված բեռների հայտարարագրման, ժամանակավոր պահպանության հանձնման կամ ետ արտահանման հետ կապված

մաքսային մարմնի թույլտվությունը ստանալուն ուղղված մաքսային գործառնություններ: Սույն կետում նշված ժամկետներում հայտարարագրման, ժամանակավոր պահպանության հանձնման կամ ետ արտահանման հետ կապված մաքսային մարմնի թույլտվությունը ստանալուն ուղղված մաքսային գործառնություններ չիրականացվելու դեպքում այդպիսի ապրանքները արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ ԵԱՏՄ ՍՕ 51-րդ գլխին համապատասխան:

46. ԵԱՏՄ ՍՕ 83-րդ հոդվածում նշված անձինք ինքնուրույն կամ մաքսային ներկայացուցչի միջոցով մաքսային մարմին և ներկայացվում ԵԱՏՄ ՍՕ 107-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները պարունակող՝ ԵԱՏՄ ՍՕ 108-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը և ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված Սաքսային տարանցում՝ մաքսային ընթացակարգով լրացված մաքսային հայտարարագիր, որի շրջանակներում, ռիսկերի կառավարման համակարգի կիրառման արդյունքում որոշվում են ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները, որոնց համապատասխան էլ, ըստ անհրաժեշտության, ավտոմեքենան ՀՀ ՊԵԿ նախագահի 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 399-Ա հրամանով սահմանված կարգով ենթարկվում է ռենտգեն դիտարկման և նկարահանման, կամ ռիսկերի նվազեցմանն ուղղված համակարգով առաջադրված այլ գործողությունների:

47. Մաքսային մարմնի պաշտոնատար անձինք ռիսկերի կառավարման համակարգի առաջադրած ցուցումները կատարելուց հետո, կախված դրանց արդյունքներից, համապատասխան գրառումներ են կատարվում հայտարարագրման համակարգում, համակարգում իրականացվում է բեռի բացթողումը և այդ մասին համապատասխան գրառում է կատարվում բեռը ուղեկցող փաստաթղթերում կամ հայտարարագրի թղթային տարբերակի վրա, հաստատվում անձնական կնիքով և տրամադրվում սահմանված կարգով լրացված և հաստատված՝ ՊՄԱԿ-ի տարածքից դուրս գալու անցագիր:

48. Սաքսային տարանցում՝ մաքսային ընթացակարգից տարբերվող ընթացակարգի ընտրությամբ մաքսային ձևակերպումները կատարելու նպատակով՝ ԵԱՏՄ ՍՕ 83-րդ հոդվածում նշված անձինք ինքնուրույն կամ մաքսային ներկայացուցչի միջոցով մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմնի պաշտոնատար անձանց են ներկայացնում ԵԱՏՄ ՍՕ 106-րդ հոդվածով նախատեսվող տեղեկությունները պարունակող մաքսային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը, ինքնուրույն կամ վարչական շենքում գործող միջնորդական գործունեություն իրականացնող անձանց միջոցով սահմանված կարգով լրացվում և ներկայացվում է ապրանքի հայտարարագիր, ուղևորային մաքսային հայտարարագիր, կատարվում են փաստաթղթային և փաստացի հսկողական անհրաժեշտ բոլոր գործառնությունները, ապահովվում են արգելքների ու սահմանափակումների

պահպանումը, այդ թվում ըստ անհրաժեշտության՝ մանրակրկիտ գննությամբ, ինչի ավարտից և ապրանքների բացթողումից, ինչպես նաև անհրաժեշտ մաքսային գործառնությունները կատարելուց հետո տրամադրվում է բացթողնումը իրականացրած պաշտոնատար անձի անձնական կնիքով հաստատված օդանավակայանի տարածքից դուրս գալու անցագիր:

49. Մաքսային կանոնների խախտումների հատկանիշների առկայության դեպքում օրենքով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն և նյութերի ընթացքը ապահովվում է օրենսդրությամբ նախատեսված կարգով:

50. Օդանավակայանում տեղակայված պետական այլ մարմինների կողմից ձևակերպման ենթակա բեռների հսկողության օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում մաքսային ձևակերպումների աշխատանքները սահմանված կարգով հաջորդում են տվյալ մարմինների հսկողական գործառնություններին:

51. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում, համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ ապրանքները և տրանսպորտային միջոցը (օդանավը) կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ գնման և (կամ) ռենտգեն դիտարկման և (կամ) նկարահանման՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

52. Սահմանապահ վերակարգի վերահսկողության ներքո օդանավի ուղևորները իջնում և տեսականրջակով ուղղորդվում են դեպի օդանավակայանի ժամանման սրահ: Եթե օդային տրանսպորտը կայանել է հեռավոր կայանատեղում, ապա ուղևորները դեպի ժամանման սրահ տեղափոխվում են տրանսպորտային միջոցով՝ սահմանապահ վերակարգի և ավիացիոն անվտանգության աշխատակցի ուղեկցությամբ:

53. Ժամանած ուղևորները, ըստ հոսքուղիների, մոտենում են սահմանային վերահսկողության գոտի և հերթով մոտենում են սահմանային վերահսկողության խցիկներին՝ ըստ գոտի ժամանման հերթականության (հերթի կարգավորումն իրականացվում է օդանավակայանի ուղևորների սպասարկման ծառայության աշխատակիցների կողմից):

54. Պետական սահմանի հատման կանոնների խախտման նշանների, պետական սահմանի հատման կանոնների և պետական սահմանի անցման կետերի ռեժիմի կանոնների խախտողներին ժամանակին հայտնաբերելու նպատակով, սահմանային

վերահսկողության իրականացնելու ընթացքում, սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է սահմանահատող անձանց հոսքերի դիտարկում:

55. Սույն սխեմայի 17-րդ կետում նշված անձանց փաստաթղթերը ստուգվում և ձևակերպվում են արտահերթ:

56. Սույն սխեմայի 22-25-րդ կետերով նշված գործողություններն իրականացնելուց հետո սահմանապահը ձևակերպում է ուղևորի փաստաթղթերը և տվյալները մուտքագրում է ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (այսուհետ՝ ՍԷԿՏ) համակարգ, պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում կատարում է համապատասխան նշում (ամսաթիվ-կնիքի դրոշմում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ) և թույլատրում է ուղևորին անցնել ուղեբեռի ստացման սրահ, իսկ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում արգելում է մուտքը:

57. Օտարերկրացու մուտքը ՀՀ չթույլատրելու դեպքում ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձը կատարում է սույն սխեմայի 26-31-րդ կետերով նախատեսված անհրաժեշտ գործողություններ և ձևակերպումներ:

58. Ուղեբեռը ստանալուց հետո ուղևորներն անցնում են մաքսային հսկողության գոտի:

59. Օդանավակայան ժամանող ուղևորների համար նախատեսված սրահում նրանց կողմից փոխադրվող անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման կարգի ու պայմանների պահպանման, ակնհայտ առևտրային քանակության կամ նշանակության ապրանքների առկայության մաքսային հսկողության գործառնություններն իրականացվում են մաքսային մարմինների կողմից՝ ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով սահմանված կարգով:

60. Օդանավակայանի վարչական շենքի մաքսային հսկողության գոտի անցնելուց հետո ուղևորները, ԵԱՏՄ ՍՕ 257-րդ հոդվածով նախատեսված կարգով, ինքնուրույն ընտրություն են իրականացնում մաքսային հսկողության երկուղային համակարգում, ընտրելով «կարմիր» կամ «կանաչ» ուղիներից որևէ մեկը, ինչին համապատասխան էլ՝ ԵԱՏՄ ՍՕ 37-րդ գլխով նախատեսված կարգով իրականացվում են ՀՀ ժամանող ուղևորների անձնական օգտագործման ապրանքների մաքսային հսկողության աշխատանքները:

61. Ուղևորի կողմից «կանաչ» ուղին ընտրելը և «կանաչ» ուղու ելքը հատելը համարվում է բանավոր հայտարարություն՝ հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին:

62. «Կարմիր» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, ովքեր տեղափոխում են մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ: «Կարմիր» ուղին կարող են ընտրել նաև այն ուղևորները, որոնք, չունենալով

մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ, ցանկություն են հայտնում լրացնելու ուղևորային մաքսային հայտարարագիր:

63. Ուղևորի կողմից «կարմիր» ուղին ընտրելու պարագայում՝ նա մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնում է ուղևորային մաքսային հայտարարագիր, որը լրացվում և հաստատվում (ստորագրվում) է ուղևորի կողմից՝ մինչև ապրանքները մաքսային հսկողության ներկայացնելը:

64. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը, մինչև մաքսային հայտարարագրի ընդունումը և գրանցումը՝ հիշեցնում է հայտարարագրում ոչ հավաստի տվյալների ներկայացման պարագայում առաջացող պատասխանատվության մասին:

65. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից սահմանված կարգով ընդունվում և գրանցվում է ուղևորային մաքսային հայտարարագիրը: Գրանցված հայտարարագիրը դառնում է իրավաբանական նշանակություն փաստերի մասին վկայող փաստաթուղթ, որից հետո ուղևորային մաքսային հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու նպատակով մաքսային մարմնի պաշտոնատար անձը իրականացնում է դրանց փաստացի հսկողության գործառնություններ:

66. Ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնելուց և մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հսկողական անհրաժեշտ գործառնությունները իրականացնելուց հետո, եթե առաջանում է մաքսային վճարումներ կատարելու անհրաժեշտություն, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից կազմվում և անձին է տրամադրվում սահմանված կարգով լարցված մաքսային մուտքի օրդեր, որին համապատասխան մաքսային վճարումները կատարվելուց հետո, սահմանված կարգով իրականացվում է ապրանքների բացթողումը:

67. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից անհրաժեշտության դեպքում, օրենքով սահմանված կարգով, պահանջվում են մաքսային օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկություններ:

68. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում, կամ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «կանաչ» ուղու ելքը հատած ուղևորն իր հետ տեղափոխում է գրավոր հայտարարագրման ենթակա կամ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված ապրանքներ, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է իր գործառնություններց բխող օրենքով սահմանված մաքսային հսկողության գործառնությունները, մասնավորապես համապատասխան բավարար հիմքերի

առկայության դեպքում օդանավակայանի ժամանող ուղևորների համար նախատեսված սրահում մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ ուղևորը և ուղեբեռը կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ զննման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման (այդ թվում մարմնի ռենտգեն սկանավորման համակարգով կամ սահմանված կարգով՝ անձի մարմնի զննությամբ)՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

69. Սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական վերահսկողության կամ հսկման ենթակա ապրանքների մաքսային ձևակերպումները կատարելու ընթացքում սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտրական սահմանային պետական վերահսկողության կամ հսկողության գործառնությունները ՊՄԱԿ-ում ներկայացված մաքսային մարմինների կողմից իրականացվում են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կազմված մեթոդական ուղեցույցին համապատասխան՝ նախքան մաքսային բացթողնումն իրականացնելը:

70. Անձի կողմից ապրանքի հայտարարագիր ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելու ցանկություն հայտնելու դեպքում ինքնուրույն կամ վարչական շենքում գործող մաքսային ներկայացուցչի միջոցով սահմանված կարգով լրացվում և ներկայացվում է ապրանքի հայտարարագիր, ինչից հետո, մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ռիսկերի կառավարման համակարգի առաջադրած ցուցումներին համապատասխան, իրականացվում են փաստաթղթային և փաստացի հսկողական անհրաժեշտ բոլոր գործառնությունները, ապահովվում են արգելքների ու սահմանափակումների պահպանումը, այդ թվում ըստ անհրաժեշտության՝ մանրակրկիտ զննությամբ, ինչի ավարտից և ապրանքների բացթողնումից հետո անձը դուրս է գալիս օդանավակայանի ժամանող ուղևորների համար նախատեսված սրահից դեպի օդանավակայանի ժամանման ընդհանուր սրահ:

5. ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՆՁԱՆՑ ՄԵԿՆՄԱՆ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆՈՒՄԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԸՍՏ
ԱՆՀՐԱԺԷՇՏՈՒԹՅԱՆ՝ ՄԱՆՐԱԿՐԿԻՏ զննությամբ, ինչի ավարտից և ապրանքների
բացթողնումից հետո անձը դուրս է գալիս օդանավակայանի ժամանող ուղևորների
համար նախատեսված սրահից դեպի օդանավակայանի ժամանման ընդհանուր սրահ:

71. Օդային տրանսպորտային միջոցներով անձանց և ապրանքների ՀՀ-ից բացթողնման գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պետական կառավարման մարմինների կողմից վերահսկողություն և հսկողություն իրականացնելու հետևյալ հաջորդականությունը.

1) մաքսային հսկողություն,

2) առանձին դեպքերում սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն,

3) սահմանային վերահսկողություն,

4) ավիացիոն անվտանգության հսկողություն:

72. Մեկնող չվերթի ուղևորների հաշվառումը և ուղեբեռի ձևակերպումը, որպես կանոն, հայտարարվում է չվերթից 3 ժամ առաջ և ավարտվում է չվերթից 40 րոպե առաջ:

73. Ուղևորների մեկնման սրահում չվերթների հաշվառման տաղավարում հաշվառումից հետո ՀՀ-ից մեկնող ուղևորները փոխադրման են հանձնում ուղեբեռները և օդանավի սրահ տեղափոխման ենթակա ձեռքի ուղեբեռի հետ միասին մեկնման ընդհանուր սրահից, ավիացիոն անվտանգության աշխատակիցների կողմից նստեցման կտրոնները մուտք են գործում դեպի մեկնող ուղևորների օդանավ նստեցման համար նախատեսված սրահը տանող անցումով և մաքսային հսկողությունից, սահմանային վերահսկողությունից և ավիացիոն անվտանգության հսկողությունից հետո հասնում են մեկնող ուղևորների օդանավ նստեցման համար նախատեսված սրահը:

74. Մեկնման ուղղությամբ մեկնող ուղևորների ուղեբեռների տեսակավորման, ռենտգեն հսկողության և օդանավ առաքման համար նախատեսված տեխնիկական տարածքում նախքան ուղեբեռները մեկնող օդանավ առաքելը, ստացվող ուղեբեռը մաքսային մարմինները կարող են ենթարկել տեսազննման:

75. ՀՀ-ից մեկնող ուղևորներն ու ուղեբեռները ենթակա են մաքսային հսկողության մաքսային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

76. Մեկնման ուղղությամբ մեկնող ուղևորների ավիացիոն հաշվառման սրահից մինչև մեկնող ուղևորների սահմանային վերահսկողության տաղավարները ընկած տարածքում (Գոտի 2.3) մեկնող ուղևորները և նրանց ձեռքի ուղեբեռները մաքսային մարմինների կողմից ենթակա են մաքսային հսկողության: Մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում կամ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեկնող ուղևորների մոտ կամ նրանց ձեռքի ուղեբեռներում առկա են գրավոր մաքսային հայտարարագրման ենթակա կամ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված կամ սահմանափակված ապրանքներ կամ առկա են մաքսային կանոնների խախտման կամ մաքսանենգության հատկանիշներ, ապա մեկնող ուղևորները և նրանց ձեռքի ուղեբեռները կարող են ենթարկվել մաքսային հսկողության տեղում կամ տեղափոխվել դրա համար հատուկ առանձնացված սենյակ՝ սահմանված կարգով մաքսային հսկողություն անցկացնելու համար, այդ թվում համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում համապատասխան պաշտոնատար անձի որոշմամբ ուղևորը և ուղեբեռը կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ զննման կամ ռենտգեն դիտարկման և

նկարահանման (այդ թվում մարմնի ռենտգեն սկանավորման համակարգով կամ սահմանված կարգով՝ անձի մարմնի զննությամբ):

77. Ուղեբեռներում մաքսային հայտարարագրման ենթակա, սահմանով փոխադրման համար արգելված կամ սահմանափակված ապրանքների, մաքսային կանոնների խախտման կամ մաքսանենգության հատկանիշների առկայության դեպքում այդպիսի ուղեբեռները առանձնացվում են և ենթարկվում ֆիզիկական զննության դրա համար հատուկ առանձնացված սենյակում՝ ուղևորի ներկայությամբ:

78. Ըստ անհրաժեշտության՝ մաքսային հսկողության իրականացման ընթացքում օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի (համաձայն ԵԱՏՄ Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ 23/18 որոշմամբ հաստատված «Տեղային (ոչ ֆորմալ) ռիսկերի կառավարման ընթացքում կիրառվող ռիսկի գործոնների և հատկանիշների ցանկի») գնահատման արդյունքում, կամ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեկնող ուղևորների օդանավ նստեցման համար նախատեսված սրահում գտնվող ուղևորն իր հետ տեղափոխում է գրավոր մաքսային հայտարարագրման ենթակա կամ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված կամ սահմանափակված ապրանքներ կամ առկա են մաքսային կանոնների խախտման կամ մաքսանենգության հատկանիշներ, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է իր գործառույթներից բխող օրենքով սահմանված մաքսային հսկողության գործառույթները, մասնավորապես համապատասխան բավարար հիմքերի առկայության դեպքում համապատասխան պաշտոնատար անձի որոշմամբ ուղևորը և ուղեբեռը կարող են սահմանված կարգով ենթարկվել մանրակրկիտ զննման կամ ռենտգեն դիտարկման և նկարահանման (այդ թվում մարմնի ռենտգեն սկանավորման համակարգով կամ սահմանված կարգով՝ անձի մարմնի զննությամբ)՝ օրենքով սահմանված կարգով հետագա անհրաժեշտ հսկողությունը իրականացնելու համար:

79. Մաքսային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում կազմվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն և նյութերի ընթացքը ապահովվում է օրենսդրությամբ նախատեսված կարգով:

80. Մեկնող ուղևորները, համապատասխան վերահսկողություններն ու հսկողությունը անցնելուց հետո, ըստ հոսքուղիների, մոտենում են սահմանային վերահսկողության գոտի և հերթով մոտենում են սահմանային վերահսկողության խցիկներին՝ ըստ գոտի ժամանման հերթականությամբ (հերթի կարգավորումն իրականացվում է օդանավակայանի ուղևորների սպասարկման ծառայության աշխատակիցների կողմից):

81. Պետական սահմանի հատման կանոնների խախտման նշանների, պետական սահմանի հատման կանոնների և պետական սահմանի անցման կետերի ռեժիմի կանոնների խախտողներին ժամանակին հայտնաբերելու նպատակով, սահմանային

վերահսկողության իրականացնելու ընթացքում, սահմանապահ վերակարգի կողմից իրականացվում է սահմանահատող անձանց հոսքերի դիտարկում:

82. ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանումների պաշտոնատար անձը մուտքի թույլտվություն չունեցող և վերադարձման ենթակա՝ հատուկ կացարանում կամ օդանավակայանի տարանցիկ գոտում գտնվող օտարերկրացիների մասին, նախատեսված մեկնումից ոչ ուշ, քան 24 ժամ առաջ, այդ մասին տեղեկացնում են փոխադրողին՝ տրամադրելով վերադարձման ակտը:

83. Սույն սխեմայի 32-35-րդ կետերով նշված գործողություններն իրականացնելուց հետո սահմանապահը ձևակերպում է ուղևորի փաստաթղթերը և տվյալները մուտքագրում է ՍԷԿՏ համակարգ, պետական սահմանը հատելու իրավունք տվող փաստաթղթում կատարում է համապատասխան նշում (ամսաթիվ-կնիքի դրոշմում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ) և թույլատրում է ուղևորին անցնել ավիացիոն անվտանգության հսկողության գոտի:

84. Եթե փաստաթղթերի ստուգման ժամանակ ուղևորը չի ներկայացրել պետական սահմանը հատելու անհրաժեշտ փաստաթղթեր կամ վերջինիս ելքը ՀՀ-ից արգելված է, ապա վերջինիս ելքը ՀՀ-ից մերժվում է և ՀՀ ԱԳԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձը այդ մասին տեղեկացնում է ավիացիոն անվտանգության աշխատակիցներին ու փոխադրողին:

85. Ավիացիոն անվտանգության հսկողությունն անցնելուց հետո ուղևորները անցնում են օդանավակայանի տարանցիկ գոտի:

86. Նստեցում հայտարարելուց հետո ուղևորները տեսականրջակով ուղղորդվում են դեպի օդանավ: Եթե օդանավը կայանել է հեռավոր կայանատեղում, ապա ուղևորները դեպի օդանավ տեղափոխվում են տրանսպորտային միջոցով՝ սահմանապահ վերակարգի և ավիացիոն անվտանգության աշխատակցի ուղեկցությամբ:

87. Չվերթի ուղացման պատճառով և դրա հետևանքով ուղևորների իջեցման անհրաժեշտության դեպքում, պետական լիազորված մարմինների կողմից իրականացվող վերահսկողություններն ու հսկողություններն իրականացվում են կրկնակի՝ բացթողնման տեխնոլոգիական սխեմային համապատասխան:

6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

88. ՊՍԱԿ-ում հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների, ինչպես նաև այլ ծառայությունների միջև համագործակցությունը կարող է կազմակերպվել և իրագործվել գրավոր և (կամ) բանավոր:

89. Հերթափոխների միջև համագործակցությունն իրականացվում է հերթափոխների պետերի կողմից՝ օգտագործելով հնարավոր առկա բոլոր միջոցները:

90. Անցման կետում սահմանային վերահսկողության ստարաքաժանման պաշտոնատար անձինք մաքսային մարմինների ստորաքաժանումների համապատասխան պաշտոնատար անձանց տեղեկացնում են.

1) անցման կետում հաղորդակցությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին,

2) ուժեղացված սահմանային ծառայության անցնելու մասին,

3) լրացուցիչ ռեժիմային սահմանափակումներ մտցնելու մասին,

4) ստորաքաժանումը մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերելիս,

5) անցման կետում հայտնաբերված հանցագործությունների մասին, որոնք վերաբերում են ՀՀ ՊԵԿ իրավասությանը,

6) անցման կետում անկարգությունների և կոնֆլիկտային իրավիճակի առաջացման մասին,

7) մաքսային մարմինների աշխատակիցների անձնական անվտանգության սպառնալիքների մասին,

8) տարերային աղետների և վթարների մասին,

9) այլ դեպքերի և փաստերի մասին, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անցման կետի իրադրության վրա:

91. Անցման կետում մաքսային մարմինների ստարաքաժանումների պաշտոնատար անձինք սահմանային վերահսկողության ստարաքաժանման պաշտոնատար անձանց տեղեկացնում են.

1) տրանսպորտային միջոցներում և բեռներում թաքնված անձ հայտնաբերելու մասին,

2) ուժեղացված մաքսային ռեժիմի անցնելու մասին,

3) անցման կետում հայտնաբերված հնարավոր խախտումների մասին, որոնք առնչվում են ՀՀ ԱԱԾ ՍԶ իրավասությանը,

4) ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության ստորաքաժանման գլխածառայողների անձնական անվտանգության սպառնալիքների մասին,

5) անցման կետում հայտնաբերված հնարավոր խախտումների մասին, որոնք առնչվում են ՀՀ ԱԱԾ ՍԶ իրավասությանը,

6) տարերային աղետների և վթարների մասին,

7) այլ դեպքերի և փաստերի մասին, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անցման կետի իրադրության վրա:

92. Անցման կետում իրադրության փոփոխման դեպքում հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական կառավարման մարմինների ստորաքաժանումները համատեղ գործողություններ իրականացնելիս գործում են համագործակցության պլանների դրույթների համաձայն:

93. Արտակարգ իրավիճակներում ավտոմոբիլային անցման կետերում ՀՀ պետական կառավարման մարմինների գործողություններն ու փոխհամագործակցության ուղղությունները սահմանվում են նախօրոք հաստատված փոխհամագործակցության պլանով:

94. Անցման կետի պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության բնույթի և փոխանակման կարգի վերաբերյալ կարող են կատարվել փոփոխություններ համատեղ խորհրդակցությունների և կողմերի ղեկավարների գործնական հանդիպումների ժամանակ:

95. ՀՀ պետական կառավարման մարմինների գործունեության կոորդինացման, անցման կետում իրադրության վերլուծության, ուղևորահոսքի փոփոխման կանխատեսումների, ինչպես նաև անցման կետի աշխատանքի արդիականացման և կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակման և իրագործման նպատակով շահագրգիռ մարմինների ներգրավվածությամբ եռամսյակը մեկ անցկացվում են համատեղ խորհրդակցություններ:

96. ՀՀ ԱԱԾ և ՀՀ ՊԵԿ փոխադարձ համաձայնությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության փոփոխությունների դեպքում, սխեմայում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

7. ԵԶՐԱՓՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

97. Մաքսային օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ՊՍԱԿ-ի տարածքում գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանակավոր պահպանության վերցնելու աշխատանքները իրականացվում են մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից՝ ՀՀ ՊԵԿ նախագահի սահմանած ձևի անդորրագիր լրացնելու միջոցով:

98. Ժամանակավոր պահպանության վերցված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները մաքսային հսկողության գոտում, մաքսային մարմինների տիրապետման կամ հսկողության տակ գտնվող պահեստարաններում կամ հրապարակներում պահպանվելու նպատակով պահպանության են հանձնվում ժամանակավոր պահպանության համար սահմանված վայրերում՝ առկայության դեպքում՝ հատուկ այդ նպատակով մշակված էլեկտրոնային ծրագրային տիրույթում, համապատասխան նշագրումներ անելու միջոցով՝ նշելով ժամանակավոր պահպանության վերցված ապրանքների տեսականու, քանակների և քաշի, ժամանակավոր պահպանության վերցնելու ամիս ամսաթվի, ժամի, պատկանելության, ժամանակավոր պահպանության հանձնողի, փոխադրողի և պատշաճ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ բավարար տեղեկատվություն:

99. Ժամանակավոր պահպանության վերցված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները նյութական պատասխանատուին հետագա պահպանության հանձվելու դեպքում պարտադիր ներկայացվում է նաև Ժամանակավոր պահպանության վերցնելու անդորրագրի լրացված և մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հաստատված պատճենը:

100. Ժամանակավոր պահպանության կարգավիճակում գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցները նյութական պատասխանատու պաշտոնատար անձի կողմից Ժամանակավոր պահպանության համար սահմանված վայրերից բաց են թողնվում դրանց վերաբերյալ համապատասխան մաքսային ձևակերպումների և հսկողության (օրինակ՝ ապրանքի մաքսային հայտարարագիր, տարանցիկ մաքսային հայտարարագիր, ուղևորային մաքսային հայտարարագիր) կամ դրանց հետագա ընթացքի կամ վերաարտահանման մասին (օրինակ՝ ապրանքներն ու տրանսպորտային միջոցները վերցնելու մասին արձանագրություն, վերաարտահանման մասին մակագրված դիմում, կամ այլ փաստաթուղթ) լիազոր պաշտոնատար անձանց կողմից կայացված որոշման և պահպանության համար սահմանված վճարների վճարված լինելու փաստը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում: